

Հայկական գիտահետազոտական հանգույց  
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտերծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

սրտմենել և տարածել նյութը ցանկացած մեդիայով կամ կրիչով  
մեջբերել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:


Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

Spencer







11. 7. 21. - 22

---

---

Գ. ԶԻՆՈՎՅԵՎ

**ՄԵՐ ՀԵՐԹԱԿԱՆ  
ԱՆԵԼԻՔՆԵՐԸ**

---

---

Հ. Կ. Կ. Կ. Կ. ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ  
ՅԵՐԵՎԱՆ—1924.



32(47)  
9-64

✓

Պրոլետարներ բոլոր յերկրների, միացե՛ք.

Գ. ԶԻՆՈՎՅԵՎ

ՄԵՐ ՀԵՐԹԱԿԱՆ



ԱՆԵԼԻՔՆԵՐԸ

(Հոկտեմբերյան Հեղափոխության 7-րդ տարե-  
դարձի առթիվ).

380

A T  
19140

~~380~~



Հ. Կ. Կ. Կ. Կ. Հրատարակչություն.

Տպագր. Տրեստի Ղարաքիլիսայի Բաժ. — 1924 թ.

1870

1870

1870

1870



1870

1870

1870

1870

1870

1870

1870

Ինչպես գիտեք, մենք շուտով մեր հեղափոխութեան յոթերորդ տարեդարձն ենք տոնելու: Յեւ միանգամայն հասկանալի յե, վոր գուտ գործնական ամենորյա հարցերի հետ միասին, բանվորներն անցած ճանապարհին մի հետադարձ հայացք գցելու և իրենց առաջ մի քանի ավելի ընդհանուր հարցեր դնելու պահանջ պիտի զգան:

## ՄԵՆՔ ԲՈԼՈՐՍ—«ՀՈԿՏԵՄԲԵՐԱԿԱՆԵՐ» ԵՆՔ

Այստեղ քիչ առաջ մեր ընկերներից մեկը, վոր Պուտիլովյան գործարանի ձուլող բանվոր է, ասաց, վոր մենք այժմ բոլորս ել—«Հոկտեմբերականներ» ենք, այսինք նա ուզում էր ասել, թե Հոկտեմբերյան Հեղափոխութեան կողմնակիցներ ու պաշտպաններ ենք: Ինչպես տեսնում եմ բանվորութեանն արդեն մոռացել է, վոր մի ժամանակ «Հոկտեմբերականներ» եյին կոչվում սև հարյուրակային կալավածատերերը, վորոնք ցարական դոմայում իրենց Ֆրակցիան ունեյին: Վատ չի, վոր արդեն կարելի յե մոռանալ այդ ժամանակը: Յեթե ինձ հարցնեյին, թե այս յոթ տարիների ընթացքում մեր ապրածի իտոգներից

վորն և ամենակարևորը, յես կարող եյի պատասխանել. ամենակարեւորն այն է, վոր հիմա բոլոր բանվորներն ու բանվորունհիները— «Հոկտեմբերականներ» են, բոլոր նրանք— Հոկտեմբերյան Հեղափոխութեան կողմնակիցներ են:

Յեւ յեթե ներկայումս ինչ վոր վեճեր, ինչ վոր թյուրիմացություններ կան, դրանք այն մասին չեն, թե՛ մեզ խորհրդային վարչաձև է պետք, թե բուրժուական-դեմոկրատական: Այդ արդեն անցած ճանապարհ է, այդ մասին այլևս չեն վիճում բանվորական շրջաններում. այժմ մենք միայն քրտնաջան կերպով աշխատում ենք խորհրդային կարգերի շրջանակներում ամբարպնդել գյուղատնտեսությունը, կանոնավորել ժողովրդական կրթութեան, առողջապահութեան գործը և այդ բոլորը վորքան հնարավոր է լավ հիմքերի վրա դնել: Անցած տարիների մեր ամենագլխավոր նվաճումը այն է, վոր բանվորութեան մեջ այլևս չեն վիճում այն մասին, թե արդյոք պէտք էր մեզ այս հեղափոխությունը, թե վոչ: Կար ժամանակ, յերբ բանվոր դասակարգի շարքերում տարակարծություն կար այս հարցի մասին, նույնիսկ այնպիսի ժամանակ կար, յերբ բանվորների մի մասը զենքը ձեռին դուրս էր գալիս մյուս մասի դեմ: Մի մոռանաք, վոր այն կոմյերիտականները, վորոնք այժմ 16 տարեկան են և վորոնք հաճախ արդեն

առաջին շարքերում են գտնվում, Հոկտեմբեր-  
յան հեղափոխութեան սկզբին դեռևս շատ ան-  
չափահաս եյին: Իսկ ինչ մեր հիանալի պատկոմ-  
ներին ե վերաբերվում, նրանցից շատերը դեռևս  
նույնիսկ ծնված չեյին այն ժամանակ: Նրանց  
ծանոթ չեն այն յերկմտությունները և այն  
պայքարը, վորն այն ժամանակ բաժանում էր  
բանվորներին իրարից: Կարիքից ճնշված, կուլ-  
տուրապես հետամնաց, և՛ բուրժուազիայի, և՛  
մենշեիկների կողմից խաբված բանվոր դասա-  
կարգը մի ժամանակ տատանվում էր, չգիտեր  
Կոմունիզմի կարմիր դրոշին հարի, թե կիսա-  
ճամփին մնա:

Այդպիսի տատանումներ նկատվում եյին և՛  
հուլիսյան որերին, և՛ Հոկտեմբերի նախորջակին,  
և՛ նույնիսկ մեր կողմից իշխանություն նվաճե-  
լուց հետո: Կրոնշտադի ծանր որերին մեր Լե-  
նինգրադի բանվորների մի շոշափելի մասը դե-  
պի աջ թեքվեց, իսկ մյուս մասը կարծում էր  
թե մեր կրած անլուր գրկանքների և մեր սովի  
պատճառը հեղափոխությունն ու խորհրդային  
իշխանությունն է: Ահա թե ինչու մեր բանվոր  
դասակարգի անցած տարվա գլխավոր նվաճումն  
այն է, վոր մենք ներկայումս բոլորս ել Հոկ-  
տեմբերյան հեղափոխութեան ողն ենք ծծում և  
ինքնին հասկանալի յենք համարում այն, վոր  
պետք է կողմնակից լինենք այդ հեղափոխու-

թյանը: Բոլորս ել հասկանում ենք, վոր մեր յե-  
տևը կան պայքարի այն տարիները, յերբ վոր  
մեր դեմ եր գնում վողջ բուրժուական աշխարհը:

Մենք ուղիղ ճանապարհ ենք գծել, և յեթե  
դեռևս չենք հասել լիովին այն կյանքին, վոր  
բանվոր դասակարգն և ստեղծելու, դրա մեղքը  
մերը չի: Յեվ հուսահատության ըրպեններին,  
փորձության ըրպեններին, յերբ վոր բանվորների  
այս կամ այն կատեգորիան տեսնում և, վոր  
բանվորության տվյալ խավի, տվյալ միության  
դրությունը վատ և—չկա լավագույն տեղ, քան  
այն, վոր հիշի մեր ապրած որերը:

### ՅՈՒԹԸ ՏԱՐԻՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՏՈԳՆԵՐԸ

Սկսեմ ներքին քաղաքականության հարցե-  
րից: Դրանք ավելի մոտ և հասկանալի յեն յու-  
րաքանչյուրիս: Ի՞նչ ենք ապրել մենք այդ յոթ  
տարիների ընթացքում:

Յես հիշում եմ այն որը, յերբ վոր Հոկ-  
տեմբերյան հեղափոխության դեմ բերվող կա-  
րևորագույն առարկություններից մեկն այն եր,  
վոր Պիտերում հացի պաշարը քիչ եր (միայն  
յերկու որվա կբավեր): Յեթե հեղափոխություն  
կատարվի, ասում եյին շատերը, վաղն և յեթ  
Պիտերն առանց հացի կմնա և սկսված սովը տա-  
սրն անգամ ավելի սուր կդառնա:

Յես հիշում եմ, թե ինչպես Հոկտեմբերյան

հեղափոխութեան առաջին տարեդարձին (վորին շատերը տառացի կերպով արցունքներն աչքերին եյին դրվատում) մեր հռետորները բարձրաձայն կերպով յերազում եյին այն ժամանակվա մասին, յերբ մենք նորից սպիտակ հացի գործածութեան կղիմենք: Մի շարք տարիների ընթացքում մեր քաղաքում և անբողջ աշխատավորական Ռուսաստանում չկար ավելի այրող, ավելի հրատապ խնդիր, քան հացի բաժնի խնդիրը: Այդ խնդիրն այժմ հերթից հանված է:

Այնուհետև կար ժամանակ, յերբ վառելիքի հարցը տառացի կերպով կյանքի և մահվան հարցեր մեզ համար, յերբ վոր ամեն ինչ մի բարակ թելից եր կախված, յերբ վոր Պիտերի լավագույն բանվորներին մենք ստիպված եյինք ուղարկել Դոնավազան, վորպեսզի նրանք իրենց ուսերի վրայով մի վողորմելի մարշրուտային գնացք քարածուխ ուղարկեն մեզ: Ապա կտրեցին մեզնից Դոնավազանը: Ռուսաստանը մեր աչքերի առաջ դանդաղութեամբ սառչում եր, սառչում եյին Ֆաբրիկաներն ու գործարանները: Մենք յուրաքանչյուր որ հաղորդագրութիւն եյինք ստանում մեր մանկատներում սառած մահուկների թվի մասին: Չկար վնչ հույսի նշույլ, վնչ մի հույս, թե մենք յերբևե մեր տեղից կը շարժվենք:

Իսկ այս տարի մեր դժվարութիւնները մի-

անգամայն այլ կարգի յեն. չենք իմանում, թե  
ինչ անենք քարածուխը (արտադրական ծրա-  
գրով նախատեսվածից 50 միլիոն փուլի  
յե արտադրված) և նավթը: Յերեկ հեղեղումից  
վնասված շրջանների ոգտին Բագվից մեզ 50 հա-  
զար ուլբլի բերող ընկերները պատմում էյին,  
վոր նավթի արտադրությունն անվերջ աճում է,  
իսկ արտասահման արտահանելու գործը վատ է  
ընթանում: Յես կարծում էմ, վոր դա դեռևս  
մեծ փորձանք չի. դա միայն ժամանակավոր ան-  
կանոնություն է. արտասահմանին արդեն իսկ  
պետք են, թե մեր քարածուխը, թե մեր նավ-  
թը: Այժմ այն ժամանակները չեն, յերբ մենք  
ստիպված էյինք մեր մեջքով մի ինչ վոր վողոր-  
մելի գնացք քարածուխ տանել:

Հիշեցեք, թե ինչ դրության մեջ եր տրանս-  
պորտը, յերբ վոր Ուկրայնա հացի գնացող գը-  
նացքը ճանապարհին անվերջ կանգ եր առնում  
և ճամփորդներն իջնում, մոտակա անտառը փայ-  
տի էյին գնում, վորպեսզի մի կերպ գնացքն  
առաջ շարժեն:

Հիշեցեք մեր խորհրդանիշի դրությունը:  
Դեռևս մոտ ժամանակներումս շատերը ձեզնից  
միլիոնատեր և նույնիսկ միլիարդատեր եր, վո-  
րովհետև ձեր ոռճիկը հարյուրավոր միլիոնների  
եր հասնում (ծիծաղ): Բայց միլիոններ վինելով  
հանդերձ, մենք այնուամենայնիվ առածում հիշ-

վող նահանգապետից վատթար դրուժյան մեջ  
էյինք գտնվում (ծիծաղ): Թվում էր, թե մեր  
տնտեսութեան այս ասպարեզը կարգավորելն ա-  
մենից դժվար է լինելու, վորովհետև այդտեղ  
մենք շատ քիչ փորձառութեան ունեյինք: Թվում  
էր, թե բյուջեյի անվերջ կարկատելուն և գերո-  
ներ ավելացնելուն վերջ չպիտի գա: Բայց, Հոկ-  
տեմբերյան հեղափոխութեան առաջիկա տարե-  
դարձին մենք այլևս հերթից հանել ենք կայուն  
դրամի հարցը: Մենք իսկական խորհրդային դրամ  
ունենք: Ներկայումս մեր նպատակը այն է,  
վոր այդ դրամից վորքան կարելի է շատ ունե-  
նանք, վորպեսզի բարձրացնենք բանվորի աշխա-  
տավարձը և պակասեցնենք գյուղացիութեանից  
առնվող հարկերը:

Վերհիշեցեք 1921 թվի բեկումը. տնտեսա-  
կան նոր քաղաքականութեան, այսպես կոչված  
նեպի անցման շրջանը: Շանր և մեծ հապաղու-  
մի շրջան էր: Շատ բանվորներ կանգնել էյին  
կիսաճամփին և տատանվում էյին: Տատանվում  
էյին վոչ թե միայն անկուսակցականներ, այլ և  
յերբեն նաև կոմունիստները: Շատերը չէյին  
հասկանում, թե ինչ է լինելու այս տնտեսական  
նոր քաղաքականութեանը: Յերկմտում էյին՝ ար-  
դյոք վնաս չի տա բանվոր դասակարգի շահե-  
րին, բուրժուազիայի իշխանութեանը չի վերա-  
ծնի: Հենց այժմ էլ կան ընտերներ, վոր դեռևս

լավ չեն ըմբռնում այդ հարցի ելուժյունը (մա-  
նավանդ յերիտասարդության շարքերում)։ Նրանք  
հենց դրա համար ել յերիտասարդ են, վոր շուտ  
բորբոքվեն, բայց իրենց վոզևորության մեջ նե-  
պի թարս յերեսը տեսնելով, նրանք հաճախ կոր-  
ցնում են ընդհանուր պերսպեկտիվը։ Պետք է  
հասկանալ, վոր նեպի միջոցով մենք հասնելու  
յենք սոցիալիզմի յեվ բանվոր դասակարգի լիա-  
կատար ազատագրության։

1921 թ. մենք կանգնած էյինք յերկնտրան-  
քի առաջ և բանվորական մասսայում մեծ տա-  
րածայնություններ կային, արդյոք ուղի՞ղ է ըն-  
տրած ուղին թե վոչ։ Բայց այժմ, յես կարծում  
եմ, վոր բանվորների մեծամասնության մեջ,  
արդյունաբերության մոտ կանգնած նրա հիմ-  
նական կորիզի մեջ, վորին կյանքը, փորձը գի-  
տուն է դարձրել—նրանց մեջ կասկած չկա այդ  
մասին, վորովհետև նրանք գիտեն, վոր արված  
քայլն ուղիղ էր, վոր նեպը—բուրժուական կար-  
գերի վերականգնում չե, այլ ամենից առաջ մեր  
քաղաքային տնտեսությունը գյուղացիությանը  
մոտեցնելու լավագույն միջոցն է։ Իհարկե, այս  
կրակով բուրժուազիայի մի մասը իր ձեռքերն  
է տաքացնում, բայց, այնուամենայնիվ, նեպը—  
ուղիղ ճանանապարհ է, վորով մենք մոտենում  
ենք մեր տենչալի նպատակին։

Յեվ այսպես, ընկերներ, նույնիսկ անցած

յոթ տարիների անցքերի թուուցիկ ակնարկից մենք տեսնում ենք, վոր վերջ ի վերջո հիմնական հաշվեկշիռը պլյուս է տալիս:

### ԱՅԺՄ ԻՆՁԻՑ ԵՆ ԳԱՆԳԱՏՎՈՒՄ.

Մեկ չէ և վոչ ել յերկու, այլ տասնյակ անգամներ առիթ է ներկայացել այնպիսի ժողովներում, վորպիսին ձերն է, մեծ հետաքրքրությամբ լսել այն, թե ինչ են ասում բանվորները: Այսոր ևս մենք լարված ուշադրությամբ վորոշ բան լսեցինք: Գանգատներ, իհարկե, կան և կլինեն: Յերկաթուղայինը դեռևս հաճախ ջոկված է և իրոք հետ է մնացել աշխատավարձի խնդրում: Նույնպիսի վիճակում ևս ուսուցիչը: Տեղ-տեղ մանվածագործների դրությունը ևս լավ չի: Մետաղագործների աշխատավարձի դրությունն էլ իդեալական չէ, թեև մեր քաղաքը մետաղագործական է: Դեռևս լիակատար հավասարակշռություն չկա այդտեղ: Մեր խորհրդային կաֆտանը դեռևս շատ պատռտվածք ունի: Այս բաների առաջ աչք փակելն իհարկե ծիծաղելի կլիներ, մանավանդ. Լենինգրադի առաջավոր, քաղաքականապես հասունացած բանվորների և բանվորուհիների շրջանում: Բայց այնուամենայնիվ տեսնենք, թե ինչ էյին գանգատվում այսոր բանվորները:

Առաջներում այսպիսի կոնֆերանսներում

մենք մեկ-մեկու ջղայնացնում եյինք նրանով,  
 վոր յերբ բանվորը գանգատվում էր, թե հաց  
 չկա և միշտ կիսաքաղց է մնում, յերբ գանգատ-  
 վում էր, թե նույն իսկ մի կաթիլ կաթ չկա հի-  
 վանդ մանուկներին կերակրելու համար, յերբ  
 գանգատվում էր ընդհանրապես սոսկալի և նյու-  
 թական կարիքի դեմ, մենք հիանալի կերպով  
 գիտակցում եյինք, վոր այդ հանդիմանություն-  
 ները տեղին են: Ահա թե ինչից եյին խոսում  
 առաջ մեր անկուսակցական կոնֆերանսներում:  
 Յեվ այդ ժամանակներում մենք անկարող եյինք  
 արագ կերպով մի վորևէ բան անել դրությունը  
 լավացնելու համար:

Լուրջ դժգոհություններ հիմա ել կան: Բայց  
 կողքին կան նաև ուրիշ բնորոշ գանգատներ:

Ասում են, թե Ֆիզկուլտուրան դանդաղ է  
 զարգանում: Այստեղ մի ընկեր գանգատվում  
 էր, վոր իր ուժերին նայած իրեն պետք է վոր  
 յերկու փթանոց կշռաքար տային, մինչդեռ յեր-  
 կու ֆնտանոց են տալիս (ծիծաղ): Սրտանց ցա-  
 վում են: Նա իզուր տեղն ինձ հաճոյախոս ակ-  
 նարկ ուղղեց—յես այնքան ել վարպետ սպոր-  
 տագետ չեմ (ծիծաղ), բայց ցավակցում եմ նը-  
 րան: Մենք լսեցինք բանվորների դժգոհությու-  
 նըն այն մասին, վոր Վասիլևսկի ոստրովում  
 յերաժշտական դպրոցներ քիչ են (այնտեղ բան-  
 վորների զավակներին ել են յերաժշտություն

սովորեցնում) և նրանք բանվորներինց հեռու են ընկած: Դարձյալ ցավում եմ: Անհրաժեշտ է, վոր յերաժշտական դպրոցները թե թվով շատ և թե ավելի մոտ լինեն: Ինձնից առաջ խոսող ընկերը Ալեքսանդրինսկի և այլ թատրոնների մասին եր խոսում: Նորինց եմ ցավակցում: Իհարկե, և՛ Ալեքսանդրինսկի, և՛ մյուս լավ թատրոնները բանվորների համար պետք է լինեն և վոչ թե նեպմանների: հուսով եմ, վոր մենք աստիճանաբար դրան ել կհասնենք: Բայց համաձայնվեցեք, ընկերներ, վոր և՛ Ֆիզկուլտուրան, և՛ յերաժշտական դպրոցները, և՛ Ալեքսանդրինսկան—այնքան ել մեծ բաներ չեն. այստեղ կարելի յե համբերել:

Մենք տեսնում ենք, թե ինչպես փոքր առ փոքր, խիստ դանդաղ, բայց անուամենայնիվ կյանքը անշեղ ընթացքով առաջանում է և ընթանում է քիչ թե շատ նորմալ հունի մեջ մտնել: Սկսում է բարձրանալ տնտեսությունը և աստիճանաբար բարձրանում է բանվոր դասակարգի բարեկեցության մակարդակը: Այս խնդրում յես չեմ ուզում պարծենալ: Այդ ծիծաղելի կլիներ: Ի հարկե, մեր քաղաքի և մեր բանվորի կյանքը դեռևս բարելավման է կարոտ: Աշխատավարձը հարկավոր չափերից դեռևս շատ է պակաս: Նամեզ մոտ ավելի պակաս է քան Մոսկվայում: Հեղափոխությունն ի հարկե նրա համար եր, վոր

աշխատավարձը նախապատերազմյանից բարձր  
լինի և վոչ թե ցածր: Բնականաբար այս հողի  
վրա յերբեմն դժգոհություններ են ծագում: Մենք  
դեռևս շատ բանում ենք հետ մնացել ու պետք  
է անցյալի բացերը լցնենք: Բայց, ընկերներ,  
լույսի շողերն այնուամենայնիվ յերևում են: Իմ  
կարծիքով վերջին յերկու տարիների ընթացքում  
մեր գործը առաջ է գնում, վոտքի յենք կանգ-  
նում և այդ առաջընթացության խանգարման  
մասին վոչ մի յերկյուղ չկա: Ընդհակառակը,  
մեծ հույսեր ունենք և բոլոր տվյալներն ասում  
են, վոր ընդհանուր բարեկեցությունն ավելի ու  
ավելի պետք է բարձրանա նաև հետագայում:

Ներքին կյանքին վերաբերվող հարցերից  
ինձ թվում է, վոր հիմնականը ներկայումս  
յերկուսն են:

## ՄԵՐ ԱՆԵԼԻՔՆԵՐԸ ԳՅՈՒՂՈՒՄ

Առաջինը—գյուղի գյուղացիության և մեր  
նրանց փոխհարաբերությունների հարցն է և  
յերկրորդ—արտադրականության բարձրացման  
հարցը:

Մեր քաղաքի բանվորները քիչ են կապված  
գյուղի հետ, ավելի քիչ, քան Մոսկվայի բան-  
վորները, թեև մի քանի գործարաններում, ինչ-  
պես որինակ Պուտիլովյան և «Սկորոխոդ» գոր-  
ծարաններում, բավական շատ են այնպիսի

բանվորներն ու բանվորուհիները, վորոնք իրենց կապերը չեն կտրել գյուղի հետ:

Գյուղում տնտեսությունը վերջերս բարձրանում է: Այս տարվա անբերրիությունը թեև հարվածեց ժողովրդական տնտեսությանը, բայց մենք յերկյուղ եյինք կրում, վոր ավելի խիստ կհարվածի: Սակայն, ընկերներ, գյուղում այնպիսի յերևույթներ են նկատվում, վորոնց վրա բանվորները, մանավանդ Լենինգրադի առաջավոր բանվորները, պետք է ուշադրություն դարձնեն: Այստեղ, մեր մեջ, բանվորական ընտանիքում, մենք տարբեր պրոֆեսիաների պատկանող բանվորների մրցում ենք նկատում: Յերբեմն ել նախանձի դեպքեր են պատահում: «Դուք մեզնից ավելի յեք վաստակում»: Բայց նկատի ունեցեք, վոր այդ տեսակի «խանդը» ներկայումս ավելի մեծ չափերով է նկատվում գյուղացիության մեջ՝ դեպի բանվորներն առհասարակ: Տասնյակ, հարյուրավոր բանվորներ ամառվա արձակուրդներին գնացել եյին գյուղ և շատերն այդ ճանապարհորդությունից ստացած իրենց տպավորություններն են պատմել: Դուք գիտեք, վոր այդ այդպես է:

### «ԽԱՆԴ» ԴԵՊԻ ԲԱՆՎՈՐՆԵՐԸ

Գյուղում դեռևս շատ ծանր ու տխրալի բաներ կան, վորոնց մասին ինքներդ ել գիտեք:

Շատ անգրագետներ, խավարամիտներ կան: Մտորերս եր, վոր Նադեժդա Կոնստանտինովնա Կրուպսկայան պատմում եր ինձ իր գրույցը մի գյուղացու հետ, վոր Ռ. Ս. Ֆ. Խ. Հ. կենտրոնական նահանգներից եր յեկել և հավատացնում եր, թե գյուղերում մինչև որս ել հավատում են այնպիսի վայրենի լուրերի, ինչպիսին այն ե, վոր բուլղիկները խլում են գյուղացիներից նրանց բոլոր յերեխաներին (ծիծաղ): Այս ծիծաղելու բան չի, ընկերներ. պետք ե աշխատենք մեր ունեցած բոլոր ուժերով բարձրացնել գյուղի կուլտուրական մակարդակը, պետք ե լուսավորել նրան:

Գյուղում ներկայում վորոշ նախանձ կա դեպի բանվորը, գյուղացիք վորոշ չափով խանդում են բանվորներին: Գյուղացիներից ստացված տասնյակ նամակները ասում են, բանվորն, ասում են, մեզնից լավ ե ապրում, իսկ մեզ մոտ իշխանության գլուխ յերկու դասակարգ ե կանդնած—բանվորն ու գյուղացին: Կառավարությունը պետք ե աշխատի այնպես անել, վոր միանման վիճակում ապրեն բանվորներն ու գյուղացիները, մինչդեռ կառավարությունը իբր թե ավելի շատ բանվորների ոգտին ե աշխատում:

Դեղատնից դեղ գնելիս վորոշ տեղերում բանվորներին զիջում են անդամ: Յեվ, յերևակայեցեք, դեղ գնելուց բանվորներին արված չրն-

A 19140

չին գեղջի լուրը, գյուղ հասնելով, բազմապատկ-  
 վում է հարյուրով և լուրերը ծայր են առնում.  
 Բանվորների դրուժյունը լավ է, նա դեղատնից  
 դեղը գեղջով համարյա թե ձրի յե ստանում, իսկ  
 մեզնում ցինգա ու մալյարիա յեն տարածված  
 — այդ հիվանդությունն իրոք կատաղի յեր այս  
 ամառ, — իսկ մենք դեղեր չունենք: Ինքնին  
 հասկանալի յե, վոր գյուղում դեռևս խորհրդա-  
 յին իշխանությանը չար կամեցողներ կան, վո-  
 րոնց համար ձեռնտու յե նման լուրեր հրահրելը:

098  
77A

Նախանձ է հարուցանում նաև բանվորնե-  
 րին կուրորտներ ուղարկելը: Ընկերներ, մենք  
 գիտենք, վոր դժբախտաբար հիվանդ և հանգստի  
 կարոտ բանվորներից քչերին ենք միայն մենք  
 ուղարկել կուրորտներ: Այդ տեսակետից վերջին  
 տարում վորոշ բան աջողվել է անել: Յերևան  
 կայեցեք, մի այդպիսի աննշան յերևույթ է  
 վոր կյանքը վնչ թե միլիոնավոր բանվորներին,  
 այլ գուցե մի քան տասնյակ հազար բանվորնե-  
 րի յե վերաբերվում՝ խորհրդային վողջ Միու-  
 թյան մեջ, — բայց լուրը գյուղ է հասնում և  
 յերբեմն ել բեկվում է. „Ա՛յ տեսեք. բանվորը  
 Տ ժամ է աշխատում, իսկ յես, գյուղացիս,  
 ամառն որ ու գիշեր եմ աշխատում. ինձնից  
 միայն հարկ են առնում (կարծես թե բանվորը  
 հարկ չի աալիս), իսկ բանվորը համարյա թե  
 կոմսի պես է ապրում համ դեղատներում են  
 գեղջ անում, համ ել կուրորտ են սղարկում“:

ՄԱՅԻՍ 1934 ՎՄԿ ԿԱՍ

Ընկերներ, այս բանի վրա պետք է ամե-  
նապուրջ ուշադրութիւնը դարձնել:

## ՄԵՐՁԵՑՈՒՄԸ ՀԻՄՔՆ Ե ԲՈԼՈՐ ՀԻՄՔԵՐԻ

Բանվոր դասակարգը չի կարող իշխանու-  
թյան գլուխ մնալ առանց գյուղացիութեան ոգնու-  
թյան: Յեւ գուր չե՛ս, վոր մենք ասում ենք, թե  
բանվոր դասակարգի շաղկապը գյուղացիութեան  
հետ՝ հիմքն է բոլոր հիմքերի: Բանվորը չի կա-  
րող բարձրացնել ժողովրդական տնտեսութիւնը  
յեւ իրոք կարգի գցել Սոցիալիստական շինարա-  
րութիւնը, յեթե մենք իսկական կապ չունենանք գյու-  
ղի հետ: Բայց բանվորը, վորպէս իշխանութեան  
գլուխ անցած դասակարգ, պետք է դատի, վորպէս  
յերկրի տեր: Նա պետք է նկատի ունենա, վոր  
յեթե տասնյակ միլիոնավոր գյուղացիները պարզ  
կերպով չպատկերացնեն, թե մեր յերկրում ինչ է  
կատարվում, անթիվ դժվարութիւններ կարող են  
ծագել մեզ համար: Պետք է լուրջ ուշադրու-  
թիւն դարձնել բանվոր դասակարգի „առանձնա-  
շնորհումների“ մասին վորոշ շրջանակների բարձ-  
րացրած „վայրահաշութեան“ վրա: Ընկերներ,  
այս, իհարկե, մի յուրատեսակ ժամանակի նշան  
է: Այդպիսի բան գյուղացին առաջ չեր անում:  
Հարաբերութիւններն առաջ այլ եյին և այլ  
Փակտորներից եյին բաղկացած: Սովի և շրջա-  
պատման տխուր տարիներին, յերբ բանվորը

գյուղ գնալով հանուժ էր իր հագից վերջին ժի-  
ւետը և տալիս էր յերկու ֆունտ կարտոֆիլի,  
գյուղի հետ մեր հարաբերությունները փոքր  
ինչ այլ էյին, այլ կենցաղ կար:

Այժմ, յերբ բանվորն սկսել է մի քիչ ավելի լավ  
ապրել, խորհրդային իշխանության բոլոր գիտա-  
կից թշնամիները միանուժ են, բանվորին բաժին  
ընկնող փշրանքների պատճառով դեպի նա խանդ  
և նախանձ հրահարելու համար: Դեռ ևս մեծ և  
խիստ վիճելի հարց է, թե նյութականի տեսակե-  
տից ով է ավելի լավ ապրում—բանվորը, թե  
գյուղացին:

Կառավարութիւնը պետք է աշխատի և  
իրոք աշխատում է բարելավել բանվորների և  
գյուղացիների կյանքը:

ՎՏԱՆԳԸ ՊԵՏՔ Ե ՆԱԽԱՏԵՍԵԼ ՅԵՎ  
ԺԱՄԱՆԱԿԻՆ ՆՐԱ ԱՌԱՋՆ ԱՌՆԵԼ

Մեծ դժբախտութիւն կլիներ, յերբ սև կա-  
տու անցներ գյուղացիների նշանակելի մասի և  
բանվորների միջև: Իսկ այդ վտանգը ներկայումս  
կա, և դուք, ընկերներ՝, պետք է լիովին գիտակ-  
ցեք այդ:

Բանվորին բաժին ընկնող ամեն մի փշրանք  
ուռչում, մեծանում է գյուղի աչքում: Թշնամի-  
ները գիտակցաբար այդ թույլ կողմին են հար-  
վածում, վորպեսզի այնպիսի տպավորութիւն

ստեղծեն, թե քաղաքը «Թալանուժ է» գյուղին հոգուտ բանվորների: Ընկերներ, այս, իհարկե, գյուղի տրամադրութեան հիմնական գիծը չէ: Ընդհանրապես գյուղը խորհրդայնորեն է տրամադրված: Չպետք է չափազանցել: Բայց մենք ել հենց դրա համար ենք առաջավոր դասակարգ, վորպեսզի վաղորոք նշմարենք նոր բացասական տրամադրութեանները և չթողնենք, վոր դրանք ծավալվեն և վորևէ լուրջ բան դառնան:

Մենչեկներն ու եսերներն այս յոթ տարիների ընթացքում քանիցս գիտակցաբար աշխատել են գծտել քաղաքը գյուղի հետ: Նրանք մի ժամանակ նույնիսկ առանձին խորհուրդներ եյին ստեղծել—գյուղացիական ներկայացուցիչների և բանվորական ներկայացուցիչների խորհուրդ: Նրանք հասկանում եյին, վոր յեթե հաջողի գծտել այդ յերկու ուժերը, դրանով անաջողութեան կմատնվի Հոկտեմբերյան հեղափոխութեանը:

Ուսուցիչների, գյուղթղթակիցների, մեր տերրիտորիալ գորամասերի, կարմիր բանակայիների, գյուղ ընկած կուրսանտների ու բանվորների, գյուղում աշխատող կոմյերիտականների յեվ այլոց պարտականութեանն է՝ ամենալուրջ ուշադրութեանը դարձնել գյուղացիութեան մի մասի մեջ յերեվցած այդ անցանկալի տրամադրութեանների վրա:

Պետք է կարողանանք բացատրել գյուղա-  
ցուն բանվորի իսկական դրուժյունը, պետք է  
կարողանանք հասկացնել նրան, թե ինչպես քա-  
ղաքում լավագույն բանվորներն, իրանց ուժերի  
վերջին մնացորդի գնով, վերականգնում են Ֆա-  
բրիկաներն ու գործարանները, վոր գյուղին էլ  
են պետք, և ինչ զոհաբերություններ են անում  
նրանք այդ բանի համար: Այս իսկ պատճառով  
ամեն մի բանվոր պետք է հասկանա, վոր աշ-  
խատավարձի և բոլոր այլ նյութական հարցերի  
լուծման համար խորհրդային կառավարությունը  
ստիպված է լինում ով գիտի ինչքան շատ մտա-  
ծել, վորպեսզի ավելորդ վոչինչ չտա և մանրա-  
գննին կերպով քննել ամեն մի հարկի հարց, ա-  
մեն մի նոր ձեռնարկում (мероприятие), վոր-  
պեսզի գյուղացուն շատ չծանրաբեռնի, վորվհե-  
տև յերկու դասակարգերի—բանվոր դասակար-  
գի և գյուղացիության—դաշինքը հիմնքն է ա-  
մեն ինչի:

ԱՄՐԱՑՆԵԼՈՎ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒ-  
ՆԸ, ՄՈՌԱՑՈՒԹՅԱՆ ՄԻ ՄԱՏՆԻՐ  
ԳՅՈՒՂԻՆ

Մոտ անցյալում, տարրերային պատուհաս  
հեղեղումի պատճառով, կենտրոնական կառավա-  
րությունը մեզ ոգնեց 12 միլ. ուրբլիով և բացի  
այդ, վորոշ բան էլ ապառիկ տվեց: Արդար

վոր ասեմ, այդ դրամը վերցնելը հեշտ չեր, վորովհետև այս տարի մեր յերկուամ անբերրիություն եր, հարկերը ծանր եյին և, բացի այդ, գյուղացիք կարող եյին ասել, թե այ, տեսաք, նրանց քաղաքում հեղեղում յեղավ ու պետական գացձատուենն իսկույն ոգնում ե նրանց, իսկ այդ 12 միլիոնը հետո դարձյալ մեզնից են վերցնելու: Ի հարկե, գյուղացիության լավագույն մասը կհասկանա, վոր կառավարությունը պարտավոր եր ոգնել Լենինգրադին, վոր նա չեր կարող չոգնել: Գյուղացիությունը գիտի, թե ինչեր են արել Լենինգրադի բանվորները հեղափոխության համար: Բայց մենք ել պետք ե հասկանանք, վոր գանձատնից անելիք մեր պահանջները պետք ե «խուզենք» (կրճատենք): Նկատի ունեյինք, ընկերներ, վոր բանվորները մեր յերկրում փոքրամասնություն են կազմում: 5-6 միլիոն բանվորներին 10 անգամից ավելի գյուղացի յե ընկնում: Գյուղացիությունը ցրված ե ապրում: Բնական ե, վոր գյուղացիների մեջ անհամեմատ ավելի յեն անգրագետները, քան բանվորների մեջ, անհամեմատ ավելի շատ են նախապաշարումներն, անհամեմատորեն պակաս ե գիտակցականությունն ու կազմակերպվածությունը: Ահավասիկ սրանք են գյուղի բացասական տրամագրության աղբյուրը, և մենք պետք ե իմանանք ու հաշվի առնենք մեր բոլոր տնտեսական և քաղցրուսվարական ծրագրեր կազմելու ժամանակ:

## ՎԵՐՄԱԿԻԴ ԶԱՓՈՎ ՎՈՏՆԵՐԻԴ ՄԵԿՆԻՐ.

Մենք չենք կարող բյուշե կազմել, տնտեսություն վարել և աշխատավարձ սահմանել յեւրակետ ընդունելով այն, ինչ վոր քաղաքում ե կատարվում: Վնչ. մենք միշտ պետք ե հիշենք, վոր այնտեղ, մեր թիկունքում, հարյուր միլիոնավոր գյուղացիներ կան, վորոնցից շատերը հետամնաց, թզուկային, վողորմելիորեն չնչին տնտեսություն ունեն և ապրում են այնպիսի խուլ անկյուններում, վորտեղ գյուղացին մինչև որս ել մարխ ե վառում: Յերեկ յես հարցրի Ադրբեջանի (Բագու) ժողկոմխորհի նախագահից, վոր Լենինգրադ ե յեկել, թե՛ «ինչ արժի նավթը տեղում»: — Չորս կոպեկ, — պատասխանեց նա: Թվում ե, թե բարձր գին չի, բայց գյուղացիները Բագվի շրջակայքում այնուամենայնիվ դեռ ևս մարխ են վառում: Շուրջը նավթը ծով ե ու գինն ել՝ չորս կոպեկ ե Ֆունտը, բայց գյուղացին դեռևս այնքան աղքատ, վոր մարխ ե վառում նույնիսկ Բագվի նահանգում, վոր ովհետև նույնիսկ չորս կոպեկ վճարելը նրա համար ծանր ե:

Մեր յերկրում, իհարկե, կան նաև առանձին շրջաններ, վոր ավելի յեն հարուստ, բայց կան նաև այնպիսիները, վորտեղ ամենատարրական բաները, վորոնց մասին քաղաքի բանվորն այլևս չի ել մտածում, բայց դրանք այդ շրջանների համար չտեսնված պերճանք են: Այս իսկ

պատճառով մենք պետք է գեթ մի փոքր հավա-  
սարեցնենք մեզ նաեւ գյուղացիութեան այդ հետա-  
մնաց անկյունները: Ահա թէ ինչու ավելի առա-  
ջագետք բանվորը պետք է պարզ կերպով գի-  
տակցի, վոր մեր յերկրում և՛ աշխատավարձը,  
և՛ վողջ բյուջեն, և՛ կառավարութեան վողջ աշ-  
խատանքը, ներառյալ նաև քաղաքի կուլտ-կըր-  
թականը, չի կարելի կատարել, միայն բանվոր-  
ներին նկատի առնելով, այլ պետք է նկատի առ-  
նվի նաև գյուղացիութեանը, դրա թվում և՛ ա-  
մենաաղքատը, և՛ ամենահետամնցը, և՛ ամենից  
շատ մոլորվածը:

## ՄԵՆՔ ՈՒԺԵՂԱՑՆՈՒՄ ԵՆՔ ԽՈՐՀՐԴԱ- ՅՈՆ ԱՊԱՐԱՏԸ ԳՅՈՒՂՈՒՄ

Մեր գյուղերում խորհրդային իշխանութեան-  
նրն, ի հարկե, դեռևս այնքան լավ չի կազմա-  
կերպված, վորքան բանվորական կենտրոններում:  
Այստեղ ել վորոշ բան կաղում է: Յես լսել եմ  
խնամիութեան, բարեկամութեան, հովանավոր  
վերաբերմունքի մասին, բայց գյուղերում հա-  
ճախ ավելի վատ է: Այնտեղ յերբեմն միլիցիո-  
ներն ու ֆին-աշխատավորը իրենց ներկայացը-  
նում են վողջ իշխանութեանը: Մենք միայն նո-  
րերս կարողացանք տանելի աշխատավաճի դեկ-  
րետ ընդունել գյուղի հինգ-վեց աշխատավորնե-  
րի՝ գյուղական դատավորի, հողային գործը կա-

ուսման, միջնակարգի, գործկոմի նախագահի  
և կուլտուրական աշխատավորի, խորհիթ-ընթեր-  
ցարանի վարիչի կամ սրա նման այլ աշ-  
խատավորի համար: Իսկ մինչ այս մենք չեյինք  
կարողանում ապահովել նրանց փոքրի-շատե-  
տանելի ուժեղացում և մեր բանվորի ստացածի կի-  
սից ել պակաս եյինք վճարում: Ահա թե ինչու  
այնտեղ իշխանությունը չեր կարող միանգա-  
մայն լավ կազմակերպված լինել, ահա թե ին-  
չու գյուղում մենք նոր ենք սկսում ստեղծել  
այնպիսի ամուր և կուլտուրական, բառիս պրո-  
լետարական իմաստով, իշխանություն, վորպի-  
սին մենք ունենք Լենինգրադի և Մոսկվայի նը-  
ման կենտրոններում:

Այդ վողբալի վարձատրությունը հաճախ  
կաշառակերության պատճառ ե դառնում: Վայ-  
րեր կան, վորտեղ մեր ազմինիստրացիայի կոպ-  
տությունն ու սանձարձակությունը (распуше-  
НОСТЬ) աչք ե ծակով և արդար բողոք ե առա-  
ջեցնում: Կան յերևույթներ, վորոնց առաջ չի  
կարելի աչք փակել: Մենք այժմ նպատակ ենք  
դրել լրջորեն առաջ քշել աշխատանքը գյուղում,  
բայց այդ աշխատանքը մենք, իհարկե, չենք  
կարող առաջ քշել միայն կուսակցության ուժե-  
րով. այստեղ պետք ե յեռանդուն կերպով ոգնեն  
մեզ ընդ որ գյուղի հետ կապ ունեցող բանվորներն  
ու բանվորուհիները: Գյուղում աջողություն կա-

րող և ունենալ միայն նա, ով ճանաչում և գյուղը և կապված է նրա հետ, բայց գասարու-լորը՝ յերբեք:

## ԴԵՊԻ ԱՆԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ԳՅՈՒՂԱՑԻՆ ՊԵՏՔ Ե ԱՎԵԼԻ ՎՍՏԱՀՈՒԹՅՈՒՆ ՏԱԾԵԼ

Մենք հենց նոր ենք հերթի գրել այն խըն-դիւրը, վոր ընտրությունները գյուղում պետք է կատարել ավելի լավ, ավելի կազմակերպված ձևով և ավելի ազատ, քան մինչև այժմ է յե-ղել: Յերբեմն մերոնք համը հանում էյին. գյու-ղացիների չուզած և նրանց վատահոլթյունը լի-ովին չվայելող շրջգործկումի նախագահ էյին փա-թաթում նրանց վզին: Իսկ մենք շատ քիչ մարդ ունեյինք և գյուղի հետ մեր կապը շատ եր-թույլ ու դրանով զբաղվելու ժամանակ ևս չեր. պատերազմն և այլ պատուհասները խանգարում էյին և մենք ժամանակ չունեյինք, վոր ինչպես վոր պետքն է զբաղվենք գյուղում խորհրդային իշխանության շինարարությամբ: Ներկայումս մենք ընդհուպ մոտեցել ենք այդ հարցին. այժմ ավելի շատ պետք է աշխատենք գրավել անկու-սակցական գյուղացիներին յեվ ավելի ուշադիր կերպով պետք է լսենք նրանց ձայնը:

Թեև գյուղում դեռևս տգիտությունն ուժեղ է—չարքերի յեն հավատում, հավատում են, վոր

բոլշևիկները մանուկներին խլում-ինչ վոր տեղեր  
են տանում և այլն,—բայց յոթ տարվա ընթաց-  
քում այնտեղ ել ե նոր սերունդ ստեղծվել: Կան  
ուսումնասիրողներում յեղած նախկին զինվորներ,  
քաղաքներ տեսած գյուղացիներ, հասունացել են  
կոմյերիտականները, ուսուցիչներն նոր սերունդ  
ե առաջացել, սկսել են այլ կերպ վերաբերվել  
գյուղացիության կարիքներին գյուղատնտեսները:  
Գյուղում ներկայումս ստեղծվում են նոր պայ-  
մաններ, վոր առաջ չկային:

Ընկերներ, յեթե վերցնենք մեր ներքին  
կյանքի խնդիրները, յեթե նրանց վրա այն-  
պես կանգ առնենք, ինչպես ձեր ժողովի  
պես մի ժողովի յե վայել, պետք ասենք.  
Ներկայումս չկա ավելի կարեւոր խնդիր, քան  
այն, վոր անհրաժեշտ ե իրոք գործնականապես  
առաջ քշել մեր աշխատանքը գյուղում, գյուղը  
հաղորդակից դարձնել խորհրդային շինարարու-  
թյանը, բարձրացնել անկուսակցական գյուղացի-  
ության ներգործնությունն ու վերացնել այնտե-  
ղից կուլտությունը, բյուրոկրատիզմը, սալդաֆրո-  
նությունը, կաշառակերությունը յեվ հարբեցողու-  
թյունը:

## ՊԱՅՔԱՐ ՀԱՐԲԵՑՈՂՈՒԹՅԱՆ ԴԵՄ

Ընկերներ, մեզ մոտ, քաղաքներում, կար-  
գին հարբեցողություն կար ու տեղ-տեղ դեռևս

Տնացել է այն: Իսկ գյուղերում արբեցողությունը  
նրն ավելի մեծ չափերի յե հասած: Ինքներդ  
գիտեք, թե ինչ չարիք, ինչ պատուհաս է ար-  
բեցողությունը: Ինքներդ եք իմանում, վոր տե-  
ղեր կան, վորտեղ դա կենցաղային յերևույթ է  
դառել: Յերբ վոր արբեցողությունը մասսայա-  
կան չարիք է դառնում, յերբ վոր նա թունա-  
վորման ձև է առնում, — նա սկսում է դեմ գը-  
նալ մեր կուլտուրական աշխատանքին, դառնում  
է մի իսկական պատուհաս, իսկական աղետ, վո-  
րի դեմ պետք է լքորեն կռվել:

Ընկերներ, դուք այս կոնֆերանսում պետք  
է խորը մտածեք գյուղի հարցի մասին: Իհարկե,  
ամեն մեկի շապիկն ավելի մոտ է իր մարմնին,  
ամենքի շահն ավելի մոտ է իր սրտին: Բանվո-  
րը ամենից առաջ իր մասին, իր ընտանիքի մա-  
սին է մտածում: Ընկերներ, բայց չե՞ վոր բանվոր  
դասակարգը, հենց նրանով է տարբերվում բուր-  
ժուազիայից, վոր նա — նոր, լեռնաբարդ, իշխա-  
նության գլուխ նոր անցած յեվ վերելքի ճամ-  
փան ընկած դասակարգ է: Նրանն է ապագան  
յեվ նա դեռեվս նոր է լայն ճանապարհ դուրս  
գալիս: Նա պետք է մտածի ապագայի մասին,  
նա պետք է հեռանկար յեվ վորոշ տեսակետ ու-  
նենա իր հետագա ճանապարհի նկատմամբ: Հե-  
ղափոխությունը ներկայումս այնպիսի փուլի, այն-  
պիսի կիսակայանի յե հասցնում մեզ, վոր գյուղի

հարցը վճռական ու կարեւորագույն հարցերից մեկըն է դառնում:

## ԻՆՁ ՏԵՍԱԿ ՄԵՐՁԵՑՈՒՄ (ՇԱՂԿԱՊ) Ե ՊԵՏՔ ՄԵՋ.

Գյուղի հետ կուլտուրական շաղկապ ստեղծելու նպատակով կազմած ձեր ընկերությունը, վորին բավական մեծ հաճույքով են անդամակցում անկուսակցական բանվորներն ու բանվորուհիները, հսկայական նշնակություն ունի: Այդ—դեռևս մի փոքրիկ սկզբնավորությունըն է այն մեծ ու ընդարձակ աշխատանքի, վոր պետք է կատարել բանվորների և գյուղացիների շաղկապը կենդանի դարձնելու համար: Առանց այդ շաղկապի մենք գուցե մի քիչ, մի վերջով առաջ գնանք, բարձրացնենք աշխատավարձը. բայց լճորեն բարձրացնել տնտեսությունն ու կուլտուրան, իրոք մեր ուզածի պես կարգի դնել մեր սոցիալիստական տնտեսությունը մենք կարող ենք միայն այն դեպքում, յեթե մենք ըստեղծենք վո՛չ թե մազական (сучальная), գորքային, վո՛չ թե լրագրերում, իլլյուստրիացիաներում և պլակատներում ներկայացվող շաղկապ (պլակատներն եժան են նստում. դժվար չի բանվոր ու գյուղացի նկարել ու տակը գրել, թե սա—շաղկապ է), այլ այնպիսի շաղկապ, յերբ վոր կստեղծվի մեր ուզած, իսկական, ա-

մենորյա կապ գյուղացու հետ և յերբ վոր մենք  
կկարողանանք բավարարել նրանց եժանագին  
ապրանք հայթայթելու խնդրում, յերբ վոր մենք  
առանց կուլակի ու մասնավոր միջնորդի կոոպե-  
րացիայի և պետական առևտուր կատեղծենք,  
յերբ վոր մենք գյուղացուն փոքր ի շատե տա-  
նելի դպրոց և գյուղացիական լրագիր կտանք  
(ծափահարություններ):

### ԳՅՈՒՂԱՑՈՒՆ ԼՐԱԳԻՐ ՊԵՏՔ Ե ՏԱԼ

Լրագիրը համարյա թե արդեն որդանական  
պահանջ է դառել բանվորի համար: Ո՞վ է, վոր  
լրագիր չի կարդում, ո՞վ է, վոր լրագիր չի դուրս  
գրում: Իսկ գյուղում լրագիրը հազվագյուտ  
հյուր է: Այդ է պատճառը, վոր գյուղացին հա-  
վատում է ալքերին, դրանից է, վոր նա հաճախ  
այնքան անդյուրաթեք (заскорузлая) և այնքան  
խավարամիտ է: Գյուղին պետք է լրագիր տալ  
և նա կզարթի: Նովգորոդցիք պատմում էյին,  
վոր գյուղացիք հացահատիկ են բերում խմբա-  
գրատուն, վորպեսզի լրագրի հետ փոխանակեն:  
Այժմ մենք պետք է աշխատենք ամեն գնով  
գյուղ ուղարկել վո՛չ թե լրագրի վողորմելի թեր-  
թիկներ, այլ միլիոնավոր որինակներով լավ բան-  
վորա-գյուղացիական լրագրեր:

## ՀԱԿԱԿՐՈՆԱԿԱՆ ՊՐՈՊԱԳԱՆԴ

Պետք է տապալել գյուղական տղրուկին, վորը նորից է վորքի կանգնում: Պետք է տապալել տերտերին: Վոչ վորք չի ասում, թե ճշան հակակրոնական պրոպագանդ պետք է մղել, վորպիսին մենք հաճախ ենք տեսնում ներկայումս: Այդ պրոպագանդը, կրկնում եմ, յերբեմն չափից դուրս ճշան է, ինչպես որինակ տեղ-տեղ վրասատանում և մեզ մոտ: Մանավանդ շատ են մեղանչում այս տեսակետից ընկեր կոմյերիտականները: Դեռևս կոմյերիտական բջիջը հազիվ կազմած, մեկ էլ տեսար յերբեմն այնպիսի բաներ արեցին, վորոնք կարող են վանել նույնիսկ հասակավոր գյուղացիներից վոմանց: Դեպքեր են լինում, յերբ ամենևին հաշվի չեն առնում գյուղացու, գեղջկուհու հոգեբանությունը, անշնորհք ձևով են տանում հակակրոնական պրոպագանդը: Յեկեղեցին փակելու համար ժամանակ շատ կունենանք: Իսկ այժմ կոմյերիտականները գործը այնպես պիտի տանեն, վորպեսզի վոչ մի դեպքում գյուղացուն ու գեղջկուհուն դեպի գյուղական տղրուկը չքշեն: Հակակրոնական պրոպագանդը—կարևոր գործ է, բայց պետք է վարպետորեն մոտենալ այդ խնդրին, պրոպագանդը կատարել վոչ թե թռիչքով, այլ լուրջ և խորացրած ձևով:

## ՅԵՐԵՍՆԵՐԴ ԴԵՊԻ ԳՅՈՒՆ

Այն, և՛ կուսակցությունը, և՛ անկուսակցականները, և՛ արհեստակցական միությունները պետք է ավելի ուշադրություն դարձնեն գյուղի վրա: Իսկ այդ ուղղությամբ առայժմ քիչ բան ենք անում: Որինակ, գյուղական մշակների համագումար հրավիրելու առաջին փորձն ենք արել մենք Լենինգրադում: Այդ լավ է. բայց պետք է ավելի խորը քշել դեպի գյուղ և՛ ուսուցչին, և՛ լրագիրը, և այն ժամանակ գյուղացին ավելի մեծ ուշադրությամբ կլսի բանվորների ասածը:

Տրակտորը գյուղ գցեցինք թե չե, տեսնում ենք, վոր գյուղացիների պահանջը մի քանի անգամով գերազանցում է մեր տված պատվերներից: Գյուղացին արդեն սկսում է տրակտորի կարոտ քաշել: Բայց տրակտորի գործը մեզ մոտ լավ վիճակում չի: Մենք պետք է կառավարական վորոշում հանեյինք, վոր արտասահմանից ներմուծվող ամեն մի տրակտորին գոնե մեկ տրակտոր էլ մեր յերկրում պետք է շինենք: Մենք պետք է շտապեցնենք գյուղացիներին անհրաժեշտ տրակտորների շինելն ու կատարելագործելը, պետք է աշխատենք, վոր մեր տրակտորն արտասահմանի տրակտորից եժան և լավ լինի: Այս ճանապարհով է ահա, վոր մենք կկարողանանք վերացնել վորոշ գյուղերում ծայր առնող այն տրամադրու-

թյունը, վոր իբր թե գյուղացին հավասար չե  
բանվորին:

Մի որինակ բերեմ:

Յեթե մենք բավականաչափ ուշադրություն  
չդարձնենք գյուղի վրա, յեթե քաղաքի գործա-  
րանային արդյունաբերությունը հաշվի չառնի  
գյուղատնտեսական բանվորներին, յեթե մենք  
չափից դուրս շատ առաջ վազենք՝ ծախսերի  
խնդրում—իրոք կապերի խզում կստեղծվի. իսկ  
այդ ամենից վտանգավոր բանն է: Կար ժամա-  
նակ, յերբ բանվորները յերկու մասի եյին բա-  
ժանվում—բոլշևիկներին և մենշևիկներին: Այն ժա-  
մանակ մեր գործը մազից եր կախված—և՛ բան-  
վորներին, և՛ յերկրին կորուստ եր սպանում:  
Այժմ պրոլետարական ճակատը շտկվել է. մենք,  
բոլոր բանվորներս—«հոկտեմբերականներ» ենք,  
ինչպես ասում եյին այստեղ. մենք մի բանակ  
ենք կազմում, բայց այդ, ընկերներ, քիչ է:  
Պետք է գյուղացիության հետ ավելի շտկենք  
մեր ճակատը հակառակ դեպքում դա կազդի և՛  
բանակի վրա, և՛ արդյունագործության վրա, և՛  
գրագիտության վրա, և՛ մեր ընդհանուր դրու-  
թյան բարձրացման վրա:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԱՐՏԱԴՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ  
ԿՈՄՊԱՆԻԱՅՈՒՄ ՎՈՐՔԱՆ ԿԱՐԵԼԻ  
ՅԵ—ՔԻԶ „ՔԱՇՔՇՈՒԿ“, ՎՈՐՔԱՆ ԿԱ-  
ՐԵԼԻ ՅԵ—ՇԱՏ ԳՈՐԾ

Յերկրորդ հարցը, վորի մասին յես ուզում էյի խոսել, աշխատանքի արտադրականության հարցն է: Այսորվա վիճաբանություններից յերե- վում է, վոր այդ հիվանդոտ հարց է,—մի բան, վոր առանց այդ ել պարզ եր: Մի ընկեր ասաց. «Կալ- գուշկինն» (տնտեսարար է) ասում է՝ բարձրա- ցրու արտադրականությունը. Միլեյկովսկին (տնտեսարար)՝ նույնը, յերրորդը, չորրորդը, հին- գերորդը՝ նույնը» և այլն. և այդ բոլորը նա ընդհանուր ֆրագ է համարում:

Ընկերներ. այս խնդրում վտանգավորն այն է, վոր այդ մարդիկ կարող են խոսելու քոքած մեքենա կամ «չախչախալուզիա» դառնալ, ինչ- պես բանվարներ են ասում: Իրոք ծիծաղելի կը լինեն, յեթե մենք պարզապես ճանճերի նման ճեր ականջը տանեյինք մեր տղտղոցով. «բար- ձրացրու արտադրականությունը, բարձրացրու արտադրականությունը»: Ինչ խոսք, վոր այդ հարցը պետք է խելացի կերպով դնել:

Կար ժամանակ, յերբ վոր՝ ասենք 1920 թը- վին, մենք արտադրականությունը բարձրացնելու լողունգ եյինք տալիս: Բայց աշխատանքի ինչ

արտադրակարություն կար այն ժամանակ: Դուք  
ինքներդ ել կհիշե՞ք. աշխատավարձը չեր վճար-  
վում, կամ յեթե վճարվում եր՝ վոչինչ չարժե-  
ցող փողով, իսկ յեթե փողն ել վորևե բան ար-  
ժեր, գնելու բան չկար: Ահա թե ինչու բան-  
վորներն այն ժամանակ համարյա բոլորն ել վա-  
ռիչներ ու սրա նման բաներ եյին շինում: Այն  
ժամանակ աշխատանքի արտադրականության  
բարձրացման այդ կոմպանիան իրոք ավելի կամ  
պակաս չափով անպտուղ եր: Այժմ բանն ուրիշ ե:

Այժմ աշխատանքի արտադրականության  
նախադրյալները մեր աչքերի առաջն են: Բայց  
պետք ե տարբերել իրարից յերկու բան—աշխա-  
տանքի արտադրականությունը և աշխատանքի  
ինտենսիվությունը: Յեթե բանվորը գործադրում  
ե ավելի մկանային ույժ, ավելի լարում, դրա-  
նով ավելանում ե նրա աշխատանքի ինտենսի-  
վությունը: Իսկ ինտենսիվությունը հո միշտ  
մեծ արտադրականություն չի:

Բանվորը կարող ե լարել իր վերջին մկանը,  
բայց յեթե նրա դիրեկտորը իշի մեկն ե, աշխա-  
տել չգիտի, կամ վարպետն ե անպետք, մշակելի  
նյութը վատե, կամ կտուրն ե կաթում և այլն—  
ինչ խոսք, վոր ինչքան ել ավելացնես ինտեն-  
սիվությունը, արտադրականությունը չի բար-  
ձրանա, Ֆաբրիկատների քանակը չի մեծանա:  
Իսկ մեզ աշխատանքի այնպիսի արտադրականու-

թյուն ե պետք, վոր հնարավորություն տա մեզ  
ավելի մեծ քանակությամբ կոշիկ, մանվածո,  
մեխ և այլ ապրանք ստանալ:

Ինչ խոսք, վոր այդ կարող ե ստացվել մի-  
այն այն դեպքում, յեթե գոյություն ունենա մի  
շարք անհրաժեշտ ֆակտորներ. դրանցից մեկը,  
այն ել վոչ թե ամենակարևորը — բանվորի բա-  
րեխիղճ ցանկությունն ե: Բայց մի՞թե միայն  
այդ ե պետք: Վոչ, մենք շատ լավ ենք իմանում, վոր  
այդ միայն բանվորից չի կախված: Այդ, ամենից  
առաջ, կախված ե կառավարությունից, վորը  
պետք ե ունենա իր վորոշ ծրագիրը, հաստա-  
տուն բյուջեն, հում նյութը, վառելիքը, կանո-  
նավորված տրանսպորտը և այլն: Այնուհետև աշ-  
խատանքի արտադրականության բարձրացնելը  
կախված ե անշուշտ տեղական մարմիններից,  
ձեր անմիջական պետից, դիրեկտորից (յեթե նա  
իր պաշտոնին անհամապատասխան ե, բանվորն  
ինչքան ել վոր լարի իր ուժերը, վոչինչ չի  
դուրս գա): Դիրեկտորը պետք ե պարզ կերպով,  
իր հինգ մատի պես, ճանաչի իր գործարանը,  
իսկ վարպետն՝ իր արհեստանոցը:

Մենք պետք ե հում նյութի բավական պա-  
շար ունենանք, աշխատենք նորացնել մեռյալ ին-  
վենտարը՝ մեր մեքենաները: Այդ ինվենտարը  
շատ ե մաշվել, յերկար տարիներ առանց նորոգ-  
ման մնալով: Յեթե մենք մի քանի միլիարդ ա-

վելորդ դրամ ունենայինք, պետք է վերակահա-  
վորեյինք մի շարք տեքստիլ և մետաղագործա-  
կան ֆաբրիկաներ ու գործարաններ: Իր ժամա-  
նակին մենք այդ կանենք և վերակահավորման  
կձեռնարկենք: Յեթե մեզ շոշափելի փոխառու-  
թյուն տան դրսից, մենք այդ միջոցների մի մա-  
սը մեր գործարանների վերակահավորման վրա  
կծախսենք:

Աշխատանքի արտադրականությունը հեշտ  
բան չի: Ինչ խոսք, վոր առաջին իսկ հնարա-  
վորության դեպքում մենք պետք է մե-  
ռյալ ինվենտարի մասին ևս հոգանք: Բայց մինչ  
այդ, պետք է մեր ունեցած մեքենաներով մի  
կերպ կառավարվել ու աշխատել, տեխնիքապես  
բարելավելով այն ամենն, ինչ վոր հնարավոր է.  
մենք մեր գործարաններում խելքը գլխին մարդ  
պետք է ունենանք: Յեթե մասնագետ ենք վերց-  
նում, յեթե նրան ավելի յենք վճարում, պետք  
է վոր նա ել իրոք արժեցող և արդյունաբերու-  
թյանն անպատճառ ոգուտ տվող աշխատավոր  
լինի: Այսպես ուրեմն աշխատանքի արտադրա-  
կանության բարձրացման համար պահանջվող  
պայմանների վոչ-պակաս, քան 50 տոկոսը կախ-  
ված է վոչ թե անմիջականապես բանվորներից,  
այլ կտուավարությունից, ադմինիստրացիայից,  
արհեստակցական միություններից, յերկրի ընդ-  
հանուր կազմակերպչական դրությունից: Բայց

այդ պայմանների միայն կեսը, ընկերներ, ամբողջապես ձեզնից ե կախված: Դուք այդ չեք կարող չիմանալ:

Կար ժամանակ, յերբ բանվոր դասակարգը բուրժուազիայից ծ ժամյա բանվորական ուր եր պահանջում: Այժմ հասել ե ժամը, յերբ վոր խորհրդային կառավարությունն, այսինքը նուն այդ պրոլետարիատը, իսկական ծ ժամյա բանվորական ուր ե պահանջում բանվորներից: Մեր մայրաքաղաքներում, Լենինգրադում և Մոսկվայում ծ-ը ժամյա բանվորական ուրն իրոք գոյություն ունի, թեև վոչ-բոլոր ձեռնարկներում: Բայց մեր Ս.Ս. Հ.Մ-ի մի շարք անկյուններում աշխատանքը տեւում ե 4-ից 6 ժամ: Այդ մեր վրա խիստ թանկ ե նստում: Իհարկե, կոմունիզմի լիակատար հաղթանակից հետո մենք կկրճատենք բանվորական ուրը մինչև 6 ժամը և դրանից ել դեռ ավելի, բայց այժմ դրա ժամանակը չե:

Այժմ ծ ժամյա բանվորական ուրը նվազագույնն ե: Յեվ մենք պետք ե աշխատենք, վոր լըրիվ ծ ժամ աշխատի յուրաքանչուր ձեռնարկ յեվ յուրաքանչյուր բանվոր: Միայն այդ պայմաններում մենք կարող ենք բարձրացնել աշխատանքի արտադրականությունը:

## ՀԱՏԱՎԱՃԱՌԻ ՍԿԶԲՈՒՆՔԸ

Այստեղ խոսվեց հատավաճառի սկզբունքի

կիրառման մասին (сдельщина): Հատավճարը  
յերկսայրի սուր է. կապիտալիստական կարգե-  
րում նա հարվածում էր բանվորին անխնայորեն:  
Այդ սկզբունքը վտանգավոր կողմեր ունի:  
Իհարկե, մենք հիմա բավականաչափ կազմակերպ-  
ված ենք, վորպեսզի կարողանանք ժամանակին  
անվտանգ դարձնել նրա վատ կողմերը: Բայց ընդ-  
հանրապես, մեր յերկրի ներկա պայմաններում,  
յերբ վոր գյուղացին ծուռ աչքով է նայում քա-  
ղաքի վրա և կարծում է, թե բանվորը խիստ  
շատ է վաստակում, կրկնում էմ, մեր յերկրի  
ներկա պայմաններում հատավճարումը մեզ ան-  
հրաժեշտ է: Բայց հարցը պետք է դնել գործ-  
նական հիմքերի վրա: Մենք պարապ խոսքեր չը  
պետք է ասենք աշխատանքի արտադրականու-  
թյան բարձրացման մասին: Անհրաժեշտ է, վոր  
տնտեսարարն ու ստանուկի բանվորը (եր  
պատվիրակ արհմիության անդամի միջոցով և  
այլն) նստեն միևնույն սեղանի առաջ և գործ-  
նական կերպով արհմիությունից-արհմիություն,  
ցեխից-ցեխ և արհեստանոցից-արհեստանոց անց-  
նելով քննեն, թե ինչպես կարելի յե իրոք հար-  
մարեցնել աշխատանքի արտադրականության  
բարձրացումը, ի՞նչպես պետք է գործադրել հա-  
տավճարի կսզբունքը (сдельщина), վորպեսզի  
բանվորը չափից դուրս լարվելուց չքայքայվի և  
մյուս կողմից ել բանվորական պետությունը չը  
տուժի:

Այդ հարցը պետք է շործնականապես դնել մեր կուսակցությունը միայն այդ ձևով և լուծում այդ հարցը: Յուրաքանչյուր ընկերակցության մեջ լինում են թշնամիներինց վատթար բարեկամներ: Ինչ խոսք, վոր այդ ընկերության մեջ ևս կգտնվեն «բարեկամներ», վորոնք աշխատանքի արտադրությամբ բանվորների գլուխը կտանեն, վորովհետև չեն կարողանա բացատրել բանվորներին մեր ուղածը, և վերջինս այնպիսի տպավորություն կստանա, թե մենք մոռանում ենք մասնագետներին, մոռանում ենք դիրեկտորներին, մոռանում ենք հում նյութ ու վառելանյութը և միայն բանվորի ոձիքն ենք բռնել ու նրա հոգին ենք հանում. «բարձրացրու աշխատանքի արտադրականությունը»: Ինչ խոսք, վոր այդպես վարվելը հիմարություն կլիներ: Միայն բանվորը չի կարող լուծել այդ խնդիրը — բարձրացնել աշխատանքի արտադրականությունը: Աշխատանքի արտադրականությունը բարցրացնել կարող է միայն պետությունը, արտադրական հաստատությունները, արհմիությունները, պլյուս բանվորական մասսան:

ՄԵՐ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԴՐՈՒԹՅՈՒՆՆ ԱՆՑՅԱԼ ՏԱՐԻՆԵՐՈՒՄ

Մի քանի խոսք յեվս մեր միջազգային դրության մասին. Այստեղ ևս վատ չի լինի վեր-

հիշել այն ժամանակները, յերբ սկսվեց մեր հե-  
ղափոխութիւնը: Ինչպիսի միջազգային դրու-  
թյան մեջ եյինք մենք: Ամենասուսկալի: Չէ վոր  
մեզ ասում եյին, յենթադրենք, վոր հրաշք ե  
կատարում, դուք նվաճում եք Պիտերի, Մոսկ-  
վայի և նույնիսկ ամբողջ Ռուսաստանի բանվո-  
րության մեծամասնութիւնը. յենթադրենք, վոր  
դուք ձեր ձեռքն եք առնում իշխանութիւնը և  
դուրս եք քշում Չմեռային պալատից բուրժու-  
ական կառավարութիւնը. բայց միթե դուք չեք  
հավանում, վոր այդ խելագարութիւնն է, չե վոր  
յեթե վոչ այսոր, ուրեմն վաղը՝ ձեզ այնուամե-  
նայնիվ կճգմի—կխեղդի ստորյերկրյա բուրժու-  
ազիան—յեթե գերմանացիք չանեն՝ անգլիացիք  
չանեն՝ ուրեմն յապոնացիք կանեն: Ի՞նչ կարող  
եք անել դուք ձեր կռվում չկոփած կարմիր  
բանակով, ձեր թույլ բանվորութեամբ անգլիա-  
կան զրահապատների, գերմանական թնդանոթ-  
ների, ֆրանսիական տանկերի դեմ:

Յեվ իրոք. միջազգային հեղափոխութեան  
դրութիւնն այն ժամանակ սուսկալի յեր: Վոչ-  
վոք չգիտեր, թե վաղն ինչ է լինելու: Մենք ա-  
մեն կողմից շրջապատված եյինք թշնամիներով:  
Չեզնից վորը չի հիշում, թե գերմանական ողա-  
նավերն ինչպէս հայտնվեցին Լենինգրադի տակ,  
ո՞վ չի հիշում, թե գերմանացիք ինչպէս գրավե-  
ցին Պսկովը, բռնագրավեցին Ուկրայնան ու Իո-

նը, անգլիացիք գրավեցին Կովկասը, Արխանգելսկը և այլն: Մեզ յերկաթե ողակի մեջ եյին առել,

Վերհիշեցեք մեր հարաբերությունները Գերմանիայի հետ: Չե՞ վոր Հոկտեմբերյան հեղափոխության ժամանակ մեր գլխավոր թշնամիները գերման իմպերիալիստներն եյին: Մինչև ատամները զինված նրանց զորքերը մեր սահմանից յերկուքայլ եյին հեռու: Մենք հարկադրվեցինք ստորագրել ստորացուցիչ և ծանր Բրեստի պայմանագիրը, վորի համաձայն մենք պետք է մեծ պատերազմական տուգանքներ վճարեյինք վուկով և վորով մեր յերկրից խլվում եյին մի շարք շրջաններ: Մեր բանվորներն, ատամ-ատամի տված ստիպված եյին ընդունել այդ պայմանագիրը, հուսալով, վոր ժամանակները կփոխվեն և մենք այդ տուգանքը վերջի վերջո չենք վճարի:

Գերմանիայի տիրող դասակարգի կողմից ուղղակի և անմիջական վտանգ սպառնում է մեզ արդյոք այժմ: Յես կարծում եմ, վոր վոչ. նրանց ուժերը չի պատի: Ճիշտ է, նրանց յերկրում դեռևս կան կալվածատերեր, Փաշիստներ և յունկերներ, այնտեղ կան մարդիկ, վորոնք պատրաստ են մի գտալ ջրում ջրահեղձ անել մեզ: Սակայն նրանք ներկայումս մի հոգս ունեն միայն—ինչպե՞ս անեն, վորպեսզի պաշտպանեն իրենց զիրքերը իրենց իսկ բանվորներից:

## ՄԵՐ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՖՐԱՆՍԻ- ՅԱԻ ՀԵՏ

Վերցրեք մեր մյուս թշնամի պետութիւնը  
— բուրժուական Ֆրանսյան: Այսորվա թերթե-  
թերում (հոկտ. 18-ին) մենք կարդում ենք մի  
հաղորդագրութիւն այն մասին, վոր նրանց կա-  
ռավարութիւնը վերջապես յեկել է այն համոզ-  
մունքին, թե պետք է ճանաչել Խորհրդային Մի-  
ութիւնը: Ճիշտ է, դեռ ևս այդ հարցը վերջ-  
նականապես լուծված չի, բայց մոտ որե-  
րըս կլուծվի: Մի ֆրանսիական բուրժուական  
լրագիր գրում է. յերբ վոր յերկու սիրահարներ  
(ֆրանսիացիք սիրում են որինակներ բերել սի-  
րո աշխարհից) բաժանվում են իրարից, հետո  
նորից իրար մոտիկանալը խիստ դժվար է վի-  
նում. համապատասխան միջնորդ ստեղծելու  
անհրաժեշտութիւն է զգացվում, մինչև վոր մի  
ժամանակվա սիրահարները նորից կկարողա-  
նան հարթել իրենց հարաբերութիւնները:

Ուզում է ասել, թե մի ժամանակ էլ մենք  
այդպիսի ֆրանս-ուսական դաշինք ունեյիք  
(ցարի դաշինքը ֆրանսիական բանկիրների հետ),  
վոր մի սիրահար զույգ եր հիշեցնում. հետո  
այդ սիրահարները բաժանվեցին և նրանց սերը  
նորից տաքացնելը շատ դժվար է. թերթի կար-  
ծիքով Ֆրանսիայի կողմից ՍԽՀՄ-ին ճանաչելը  
իբր թե դժվար է հենց այն պատճառով, վոր

մենք մի ժամանակ այնպես ջերմ սիրում ե-  
յինք իրար ու հետո մեկեն հեռացանք իրարից:  
Ինչ խոսք, վոր այս ամենը շատ է սազում  
Ֆրանսիական բուրժուական լրագրերի վոզուն ու  
հոգեբանությանը: Նրանք մոռանում են, վոր  
ճիշտ է, իրենք ռոման ունեյին, սակայն այդ  
Ռոմանովի հետ եր (ծիծաղ) և վոչ թե Ռուսաս-  
տանի ժողովրդի հետ: «Ռոմանովների հետ»  
Ֆրանսիացիների ունեցած այդ «ռոմանը» մեր  
ժողովուրդն առանց հաճույքի յե հիշում, վո-  
րովհետև այդ ռոմանը մեր յերկրին (ինչպես և  
Ֆրանսիական ժողովրդին) միայն կորուստ և  
քայքայում եր բերում: Այդ սիրո եյությունն  
այն եր, վոր տարեկան տասնյակ միլլոններով  
տոկոսներ եյին վճարում Ֆրանսիացիներին վեր-  
ցրած փոխառության համար. փոխառություն,  
վորը տրվում եր ցարին պահնորդական բաժին,  
բանտերը պահելու, Յապոնյայի դեմ պատերազ-  
մելու և ուս բանկիրներին ոժանդակելու հա-  
մար: Մենք այդպիսի «ռոմանի» կարոտ չենք:  
Այդ տեսակի «սեր» նրանք յերբեք չեն կարող վե-  
րականգնել (ծափահարություններ):

ՄԵՐ ՅԵՂԲԱՅՐԱԿԱՆ ԴԱՇԻՆՔԸ ՖՐԱՆՍԻ-  
ԱՅԻ ԱՇԽԱՏԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՇԵՏ ԱՅՆՈՒ-  
ԱՄԵՆԱՅՆԻՎ ԱՄՐԱՊՆԴՎՈՒՄ Ե

Խոսքս այժմ այլ բանի յե վերաբերվում.  
վոչ թե «ռոմանի», վոչ թե «սիրո», այլ գործ-

նական հարաբերությունների մասին ենք խոսում ներկայումս: Մենք մեր սերը, մեր պարտականություններն ունենք: Այսօր դուք տեսնում եք իսկական Ֆրանսիական ժողովրդի լավագույն ներկայացուցչին, ընկ. Մարտին, վորը բանվոր ծովային է, ամուսնացած է բանվորուհու հետ, մասսայական աշխատող է, վորը մեծ ռիսկի մատնեց իրեն, յերբ վոր նրան բան տարի տաժանակրության դատապարտեցին նրա համար, վոր նա չեր ուզում կրակել ուռու նավաստիների վրա: Ֆրանսիայի այդ լավագույն ներկայացուցչի հետ մենք իրոք իսկական ընկերական սիրով են կապված—մի կողմի բանվոր դասակարգի սիրով, դեպի մյուս կողմի բանվոր դասակարգը: Մենք ընկերական կապ ենք հաստատել Կոմմունիստական Ինտերնացիոնալի միջոցով և մենք ուրիշ կապ ստեղծելու կարիք չենք զգում, վորովհետև մեր կապն ամենից ամուր է:

Ընկ. Մարտին, վոր 1919 թվին դեռևս ուռուսիյերես չեր տեսել և չգիտեյին վոչ մի ուռուսերեն բառ, դեռևս այն ժամանակ հաստատուն համոզմունք եր կազմել, վոր յերբ վոր իրեն ուղարկում են գնդակահարելու ուռուս նավաստիներին, իր, վորպես Ֆրանսիական ծովայինի, պարտականությունն է ասել. «Վոչ, յես Ֆրանսիական բանվորների և ծովայինների հետ միացած զենքըս պետք է դարձնեմ Ֆրանսիայի սպաների

դեմ»։ Կոմունիստական Ինտերնացիոնալի միջոցով մենք կապ ենք հաստատում Ֆրանսիական բանվորների և գյուղացիների հետ, և այդ կապը լինելու յե անկեղծ-բարեկամական կապ յերկու ժողովուրդների, վորը, սակայն պարոնայք կապիտալիստների կողմից մեզ ճանաչելուց չի ծագել։

Իսկ ինչ վերաբերվում է ներկայի Ֆրանսիական կառավարությանը, այստեղ խոսքը վերաբերվում է գործնական հարաբերություններին, գործնական հարաբերությունների համար անհրաժեշտ է ճանաչումը։ Իսկ այդ հարաբերություններն ոգտակար են թե՛ մեկ և թե՛ մյուս կողմի համար։ Յեվ այդ ճանաչումը, կարծեմ արդեն մոտ է։ Կասկածից դուրս է, վոր այդ հարաբերությունները ոգտակար են լինելու յերկու կողմերի համար։ Ֆրանսիական բուրժուաները, նույնիսկ ամենակատաղիները և սև հարյուրակայիները, 1924 թվին այլևս չեն յերազում (ինչպես յերազում էյին մի ժամանակ), թե կհարկադրեն մեզ վճարել հին ցարական պարտքերը. նրանք պետք է մոռանան այդ։ Ինչպես առանց նայելու ոգնության չեն կարող տեսնել իրենց ականջներն, այնպես ել չեն տեսնի հին ցարական պարտքերի վճարումը (ծափահարություններ)։

Դրա համար չե, վոր մրնք հեղափոխությունը բարձրացրինք։ Յեթե մենք մի ավելորդ

միլիարդ դրամ ունենաքն, հարյուրավոր ավելի  
կարևոր գործի վրա կծախսենք. պետք է բարձ-  
րացնել արդյունագործությունը ու աշխատա-  
վարձը, ապահովել գյուղը յերաշտից և այլն:

Մենք շատ կարիքներ ունենք, այդ փողերը  
նրանց վրա կծախսենք. համենայն դեպս այդ  
փողերը նրա համար չեն, վոր մենք դրանցով  
վճարենք ցարական հին պարտքերը, այն պարտ-  
քերը, վոր մենք չենք արել (ծափահարություն-  
ներ):

Յեթե դուք նայեք բուրժուական Ֆրան-  
սիային, այն պետությանը, վորն ամենից շատ  
թշնամի էր մեզ, դուք կտեսնեք, վոր նա այժմ  
ուրախությամբ կխեղդի մեզ մի գդալ ջրի մեջ:  
Բայց նրա ուժն էլ չի պատի: Իմպերալիստնե-  
րի թիկունքում «իրենց» բանվորներնի բանակն  
է կանգնած, վորի գլխավորները Մարտիի պես  
մարդիկ են, վորոնք պատրաստ են անձնվիրա-  
բար իրենց գլուխը դնել ոուս բանվորների հա-  
մար այնպես, ինչպես վոր մեր բանվորներն  
են պատրաստ իրենց ամբողջ ույժով ոգնելու  
Ֆրանսիական բանվորներին: Առաջվա ժամանակ-  
ները չեն: Նոր որեր, նոր յերգեր:

ՄԵՐ ՓՈՒ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ

ԱՆԳԼԻԱՅԻ ՀԵՏ

Վերցնենք Անգլիան: Յերևի դուք հիշում  
եք, ընկերներ՝ վոր սրանից մի քանի տարի

հեղափոխությունից առաջ, Պետրոգրա-  
դում գիկտատոր եր հենց այդ Անգլիայի դես-  
պան Բյուկենինը, վորի ազգանունը բոլորին է  
հայտնի: Պիտերի իսկական տերը նա յեր: Վոր-  
պես անգլիական կառավարութ. ներկայացուցիչ,  
նա իր ձեռքին եր պահում ամեն ինչ—առաջ  
ցարական կառավարությունը և այնուհետև ու-  
սական բուրժուազիայի ժամանակավոր կառավա-  
րությունը: Ներկայումս նա իր հիշողություննե-  
րըն է գրում և նրա գրքույկում մանրամասնա-  
բար պատմված է, թե ինչպես Հոկտեմբերյան  
հեղափոխությունից հետ (Բյուկենենն այդ որե-  
րում վորոշ ժամանակ մնաց Պիտերում) ոճիք-  
ները բարձրացրած, զբոսարանում գաղտնի տե-  
սակցության եյին շտապում նրա մոտ և՛ Գուլյը  
և՛ Ավկսենտևը, և՛ մյուս եսերները, վորոնք  
այլևս իշխանության տեր չեյին, բայց համոզ-  
ված եյին, թե շուտով նորից իշխանության գը-  
լուխ կանցնեն: Կերենակին Բյուկենենի մոտ  
հանձնակատար տղայի պաշտոն եր կատարում,  
Ծերեթելին խանդախտագին հայացքով նրա աչ-  
քերին եր նայում: Անգլիական դեսպանը-ահա  
թե ով եր այն ժամանակվա գլխավոր տերը:  
Բայց բանվորները այդ լավ չեյին իմանում մինչև  
1917 թվի հոկտեմբերը: Այն ժամանակներում  
լրագրերն այդ մասին խոսել չեյին կարող, իսկ  
յեթե խոսում ել եյին, հակառակն եյին անում,  
ձեր աչքերին եյին փողի փչում: Բոլշևիկներին

հետապնդում էին: Հոկտեմբերյան հեղափոխու-  
թյունից հետո Բյուզենինն իր նավերը մեր դեմ  
ուղարկեց, վերցրեց Արխանգելսկը: Նրա գոր-  
ծոն մասնակցութեամբ կազմակերպվեց նավա-  
պաշարումը:

Դուք լսեցիք մոտ որերս ազատականների  
լիդեր Լյուդ-Ջորջի և մենշևիկների պարագլուխ  
Մակդոնայլդի միջև ծագած վեճը: Մակդոնայլդը  
կամենում է համաձայնվել յերկուսիս ել ձեռն-  
տու պայմաններով մեզ 300-500 միլիոն վոսկի  
ռուբլու փոխառություն տալ, իսկ «ազա-  
տամիտ» բուրժուազիայի ներկայացուցիչ Լյուդ-  
Ջորջը ասում է. «Ձեմ ուզում տալ, նրանք այդ-  
պես ել լավ են»: Մենշևիկ Մակդոնայլդը դրան  
պատասխանեց, թե դուք մեկ միլիարդ ծախսե-  
ցիք ինտերվենցիայի, ուսական գործերին մի-  
ջամտելու վրա, ապարդյուն կերպով այդպիսի  
գումար մսխեցիք, իսկ այժմ ձեռնտու, առևտրա-  
կան հիմունքներով չեք ուզում յերեք հարյուր  
միլիոն տալ:

Այ, այսպես է, ընկերներ, յերբ վոր յեր-  
կու «բարեկամ-թշնամիներ» մկռվու են, յերբեմն  
ազնիվ մարդիկ են շահվում: Յերբ վոր վի-  
ճում են մենշևիկն ու լիբերալը, մենք պիկանտ  
նորույթ ենք իմանում, մենք ճշգրիտ թվի անուն  
ենք լսում—մեկ միլիարդ ռուբլի անգլիական  
դրամ է ծախսվել մեր հեղափոխության դեմ կռվե-  
լու համար:

Պարոնայք անգլիական իմպերիալիստները չափ-  
սոսացին մեկ միլիարդ ծախսել, մեզ սովով հաղ-  
թելու համար: Մեկ միլիարդը հազար միլիոն  
վոսկի ռուբլի յե անուամ: Լնվ գումար ե: Յեվ  
առանց վորևե տոկոսի, առանց վորևե ապահո-  
վության հեղափոխության դեմ կովելու համար  
մեջտեղ են շարտուամ: Սակայն, մի քանի տարի  
անցավ ու ի՞նչ ենք տեսնուամ:

Ներկայումս Անգլիայում փոթորկալի ընտ-  
րություններ են կատարվուամ: Հսկայական հուզ-  
մունքի մեջ են: Պերճախոսության մեջ կուսակ-  
ցությունները կատաղի կերպով մրցում են իրար  
դեմ: Վողջ անգլիան ե ալեկոծվել: Բայց հանուն  
ինչի՞ յեն պայքարուամ: Ի՞նչն ե վերընտրություն-  
ներ կատարելու դրդապատճառը: Ո՞վ ե կանգ-  
նած կենտրոնում: — Մեր Խորհրդային Միություն-  
նր: Ի՞նչի՞ մասին են վիճում: Նրան խեղդելու  
մասին: Ի հարկե, նրանք դժվար թե հրաժար-  
վեյին դրանից: Բայց սրանց ուժն ել չի պատի:  
Ո՞, այդ արդեն հնացած հարց ե: Նրանք վիճում  
են՝ մեզ 300 միլիոն կամ դրանից ավելի կամ  
պակաս, փոխառություն տան, թե վոչ: Ահա թե  
ինչու են կովում: Կռիվը ամբողջապես հենց դը-  
րա շուրջն ե պտտում, մի մասն ասում ե՝ տանք,  
մյուսն ասում ե՝ չտանք: Իսկ մենք — մենք վո-  
չինիչ, չեյինք հրաժարվի ստանալուց, միայն թե  
բարեխիղճ պայմաններով տային:

Ինձ թվում է, թե այս որինակից դուք տեսնում եք, թե ինչքան առաջ է գնացել հեղափոխությունը: Մենք նրանց խոստացել ենք, վոր յեթե փոխառություն տան, մենք սովորականից բարձր տոկոս կտանք և դրանով նրանք պետք է հանգցրած համարեն մեր բոլոր նախկին պարտքերը:

Ճիշտ է, բոլոր այն Փաբրիկանտներն ու գործարանատերերը, վորոնցից հեղափոխությունը խլել է իրենց Փաբրիկաները, վորոնց են բարձրացնում, ճշում են «կողոպտել են» որինակ մեր քաղաքի Նեյան թելի Փաբրիկան անգլիական էր, մի շարք ուրիշ այդպիսիներն էլ կան: Յեվ նրանք ասում են, վերադարձրեք այդ Փաբրիկաները: Իսկ մենք նրանց պաասսիանում ենք, տվեք մեզ 500 միլիոնի փոխառություն, իսկ մենք ձեզ վոչ թե 6 տոկոս կվճարենք տարեկան, այլ փոքր ինչ ավելի: Յեվ դուք կընդունեք, վոր դրանով մենք հանգցնում ենք դիցուք Նեյան թելի գործարանի, նավթահանքերի և այլ սրանց նման պարտքերը (Չայներ «իրավացի յե»): Յերևակայեցեք, այդ առաջարկը քննում են լրջորեն և կապիտալիստների մի մասը համաձայնվում է այդպիսի կոմբինացիային, պաշտպանում է այդ: Յեվ իրոք, յեթե խղճով խոսենք, մեզ փոխառություն տալը նրանց համար ևս ձեռնտու յե, վորովհետև Խորհրդային

Միուլթյունն իր խոսքի տերն է: Միային թագա-  
վորի արած պարտքեր նա չի վճարում: Իսկ յեթե  
մեզ փոխառուլթյուն տան, նրանք վոչինչ չեն  
կորցնի: Յեվ միենուլյն ժամանակ անգլխական  
բանվորներն ավելի յեն հեղափոխականանում,  
յեղբայրանում են ուս բանվորներին:

Յերբ վոր նայում ես այս բոլորին, ասում  
ես ինքդ քեզ՝ գործն առաջ ե գնացել, Խորհրդ-  
դային Ռուսաստանի միջազգային դրուլթյունը  
ամրացել է:

## ՄԵՐ ՓՈԽ-ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՅԱՊՈՒ- ՆԻԱՅԻ ՀԵՏ

Վերցնենք մեկ ուրիշ յերկիր, այս անգամ  
արդեն Արևելքում — Յապոնիան: Հիշում եք Հոկ-  
տեմբերյան հեղափոխուլթյունից հետո մեր վրա  
հարձակվողներից մեկն ել նա յեր: Բայց ի՞նչ  
ենք տեսնում մենք այժմ: Յապոնիայի հետ  
մենք բանակցուլթյուններ ենք վարում, վորոնք  
յերևի շուտով կավարտվեն: Ի՞նչի մասին ենք  
բանակցում: Առաջ նրանք քիչ եր մնում պահան-  
ջեն, վոր Իրկուտսկն ել Յապոնիային տանք,  
մանավանդ Կոլչակից հետո, վորը նրանց համար-  
յա թե Սիբիրի կեսն եր խոստացել:

Իսկ այժմ ի՞նչի շուրջն ե վեճը: — Յերբ  
պետք ե յապոնական զորքերը դուրս տարվեն  
Սախալին կղզու մեզ պատկանող մասից: Իսկ

Սախալինը Իրկուտսկից շատ և հեռու, ով նայել  
և քարտեզին—գիտի այդ: Յեթե վոչ այսոր՝ վա-  
ղը Յապոնիան դուրս կտանի այնտեղից իր գոր-  
քերը: Սախալինը մեզ համար կարևոր նշանակու-  
թյուն ունի, վորովհետև այնտեղ նավթ կա, թեև  
այն դեռևս շահագործված չի:

Յարը Սախալինը տաժանակիր աքսորանքի  
վայր էր շինել: Այնուհետև յապոնական պատե-  
րազմից հետո, Սախալինի կեսը վաճառեցին:  
Ներկայումս մեր վեճը Սախալինի մնացած մա-  
սի և նրա հարուստ նավթի պաշարի շուրջն է պը-  
տրտվում, այն նավթի պաշարի, վորի շահագոր-  
ծումը մենք դեռևս անկարող ենք կազմակեր-  
պել: Յես կարծում եմ, վոր այս որինակից ևս  
դուք տեսնում եք, թե ինչպես և աճում առա-  
ջին պրոլետարական հեղափոխության հզորու-  
թյունը միջազգային ասպարեզում: Յեթե առաջ  
մեզ ասում էյին՝ հում-հում կուտենք ձեզ, փոր-  
ձեցեք իշխանություն վերցնել, վաղն և յեթ ան-  
գլիացիք, Ֆրանսիացիք, գերմանացիք կհարկա-  
դրեն ձեզ այդ իշխանությունը բուրժուազիային  
վերադարձնել. —այժմ, ինչպես տեսնում եք, վե-  
րաբերմունքը դեպի մեզ փոխվել է:

Վոչ վոք չի կարող հարկադրել մեր յերկրի  
բանվոր դասակարգին, վոր իշխանությունը յետ  
դարձնի բուրժուազիային (ծափահարություն-  
ներ): Ավելին կասեմ. իբրև գաղտնիք յես ասում

եմ ձեզ, վոր և՛ անգլիական, և՛ Փրանսիական, և՛ գերմանական, և՛ յապոնական բուրժուազիան ներկայուամս այնպիսի դրուժյան մեջ են գտնու-վում, յերբ մարդիկ հարկադրված են լինում մրտածել ավելի շատ իրենց փրկության, քան թե ուրիշների կործանման մասին: Նրանք հարկադրված են մտածել այն մասին, վոր հանկարծ իրենց ձեռքից ել իշխանությունը չխլեն: Դերերը փոխվել են: Հեղափոխության սկզբին նրանք հարյուրավոր միլիոններ եյին շող տալիս, վորպեսզի ոգնեն Ռուսաստանի հակահեղափոխությանը և նա տապալի Խորհրդային կարգերը, բայց այժմ դրուժյունը հիմնովին փոխվել է: Ի հարկե, մենք դրամ շող չենք տալիս: Մենք աղքատ ենք: Մյուս կողմից ել պետք է ասել, վոր մյուս յերկրների բանվորներին վո՛չ թե դրամական ոգնություն, այլ մեր ընկերական պաշտպանությունը, մեր հեղափոխական փորձառությունն է պետք: Այն, ինչ վոր քաշել է, ինչ վոր նվաճել է բանվոր դասակարգն այս 7 տարիների ընթացքում — մենք այն ենք հաղորդում և այդ Արևմուտքի բանվորների համար միլիարդ ուրբլիներից թանկ է:

Նրանք փորձեցին իրենց բուրժուական ինտերնացիոնալը ստեղծել, բայց դրանից վո՛չինչ չի դուրս դալիս: Նրանց ազգերի լիգան զույգ վոտով է կադ: Վորևե կերպ համախմբվելու հա-

մար արված բոլոր մյուս փորձերից վոչինչ չի  
դուրս գալիս, վորովհետև մեկ այստեղից, մեկ  
այնտեղից, բանվորները նրանց թիկունքից հար-  
վածում են, մինչդեռ մեր միջազգային համա-  
խմբիչ մարմինը թեև մեր սպասածից մի քիչ  
դանդաղ և գործում, բայց վատ չի գործում:

ՄԵՐ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՄԻՈՒԹՅՈՒՆԸ ՎՈՂՋ  
ԱՇԽԱՐՀԻ ԲԱՆՎՈՐՆԵՐԻ—ԲԱՐԵԿԱՄԸ,  
ՅԵՂԲԱՅՐԸ ՅԵՎ ՈՒՍՈՒՑԻԶՆ Ե

Մեր Խորհրդային յերկիրը, կոմունիստա-  
կան Խնտերնացիոնալի միջոցով, ամբողջ աշխար-  
հի բանվորների, ինչպես և գյուղացիության նը-  
կատելի մասի, ոգնականը, բարեկամը, յեղբայրը  
և ուսուցիչն է դառել: Ֆրանսիան առաջադեմ,  
գրագետ յերկիր է, այնտեղ բուրժուական հե-  
ղափոխությունը համարյա թե 130 տարով մե-  
րից առաջ է կատարվել, նրանք իրենց թագա-  
վորին 1779 թվին գահից գլորեցին, նրանք Լյու-  
դովիկոսի գլուխն ավելի քան հարյուր տարի սը-  
րանից առաջ կտրեցին, — և, ինչպես տեսնում եք,  
Ֆրանսիան, այդ առաջադեմ ազգը, իր լավա-  
գույն մարդկանց մեզ մոտ է ուղարկում, իբրև  
բարեկամներ և մի փոքր ել վորպես աշակերտ-  
ներ, վորոնք դաս են առնում մեզնից, վորով-  
հետև մենք առաջին բանվորական հեղափոխու-  
թյունն ենք բարձրացրել: Վողջ աշխարհի բան-

վոր դասակարգի լավագույն մարդիկ մեր ոգնութ-  
յանն ու պաշտպանությանն են կարոտ:

Բուրժուազիան միջազգային դավադրու-  
թյուն լարեց մեր դեմ, բայց դավադրությունը  
աջողություն չունեցավ: Լավ մտածեցեք, մի-  
այն Անգլիան մի ամբողջ միլիարդ ռուբլի յե-  
ծախսել դրա վրա, իսկ յեթե հաշվենք, թե ինչ-  
քան են ծախսել նրանք բոլորը միասին մեր դեմ  
պայքարելու վրա, 5 միլիարդից վոչ պակաս մի  
գումար կստացվի: Յեվ այնուամենայնիվ վոչ  
մի արդյունք չստացվեց ու չի ստացվի, վորով-  
հետև բուրժուազիայի գործը պատմականորեն  
տանուկ տված գործ է: Թե դեռևս նա քանի  
տարի գոյություն կունենա, վոչ վոք չգիտե,  
բայց նրա գործը տանուկ տված է:

Մեզ համար, միջազգային բանվոր դասա-  
կարգի համար, դժվար էր առաջին անգամ ճա-  
կատը ճեղքելը, դժվար էր սկսելը: Բայց մենք  
սկսեցինք և կանգուն ենք մնում այնպիսի պայ-  
մաններում, վորոնց մասին նույնիսկ յերևակա-  
յելն էր դժվար: Նույնիսկ դժվար է թվել բոլոր  
այն դժվարությունները, վոր հաղթահարել է  
մեր հեղափոխությունն, սկսած նավապաշարու-  
մից և վերջացրած 1922 թվի համաճարակներով  
ու սովով, յերբ վոր բանը նույնիսկ մարդակե-  
րության էր հասնում, ինչպես և մի ամբողջ  
շարք տարերային աղետներ էին թափվում մեր

գլխին, — և այնուամենայիվ մենք հաղթող դուրս  
յեկանք: Ինչո՞ւ: Վորովհետև թեև շատ ծանր եր  
մեր դրուժյունը, բայց մեր պատվանդանն ըն-  
դարձակ, հուժկու, յերկաթե բանվոր դասակար-  
գըն ու նրա դաշինքն եր գյուղացիության հետ,  
վորովհետև հեղափոխությունը կյանքի կոչեց  
այնպիսի հսկայական ստեղծագործական ուժեր,  
վորոնց մասին յերազել անգամ չեյին համար-  
ձակվում ամենահամարձակ հեղափոխականները,  
— վորովհետև հեղափոխությունն արթնացրեց ժո-  
ղովրդի ամենախորունկ խավերը, — վորովհետև  
դեպի հեղափոխական գործ համերաշխ կերպով  
դիմում են բանվորուհիները, գյուղացիք, կոմյե-  
րխտականները և մեր վողջ նոր սերունդը: Յերբ  
ներկա յես լինում այսպիսի կոնֆերանսների,  
յերբ վոր տեսնում ես, թե ինչքան կազմակերպ-  
ված են ընթանում նրանք, յերբ վոր տեսնում  
ես բանվորի կուլտուրական և մտավոր աճեցո-  
ղությունն — այն ժամանակ ասում ես ինքդ քեզ-  
ահա թե ինչով են բացատրվում բոլոր այն հը-  
րաշքները, վոր աջողվել է գործել մեր հեղա-  
փոխությանը. ահա թե ինչու, թեև լիակատար  
աջողության չենք հասել, բայց այնուամենայ-  
նիվ առաջ ենք գնում:

ԱՐԵՎՄՈՒՏՔԻ ԲԱՆՎՈՐՆԵՐԸ ՇԵՏԵՎՈՒՄ  
ԵՆ ՄԵՐ ԱԶՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ

Յես կարծում եմ, վոր ձեզ համար հե-

վորներն ինչպես են հետաքրքրվում մեր աջո-  
ղություններով: 1919—1922 ծանր, սովի տարի-  
ներին մենչեիկներն ու եսերները հնչեցնում  
էին իրենց զանգատան բոլոր զանգերը և մեր  
կործանումն էին գուշակում ամեն ընդհանուր: Այժմ  
գրությունն այլ է: Այժմ բանվորները բոլոր  
յերկրներում բնագործ գգում են, վոր մեր գոր-  
ծը աջող է գնում և վոր մեր հեղափոխությունը  
մի ահագանգ է դառնում, վոր արթնացնում է  
վողջ աշխարհի բանվորներին, և նրանք ունկրնդ-  
րում են մեր ձայնին, հետևում են մեր յերկրի  
աշխատանքի արտադրականության բարձրացմանը  
և նայում են՝ արդյոք գլխիվեր կգնա մեր գործը,  
թե գլխիվայր:

Ընկերներ, չե վոր մենք մի իշխանություն  
ենք, վորն աղքատների ծոցից է յելել, բայց  
մենք ամենեվին այնպիսի իշխանություն չենք,  
վորն ուզում է ընդունի աղքատ դարձնել:

Մենք հաճախ ենք ասում, մենք աղքատ  
գյուղացիների կողմն ենք: Այո՛, ընկերներ, մենք  
մի իշխանություն ենք, վորն այդ գյուղական  
աղքատների ծոցից է յելել, բայց մենք միևնույն  
ժամանակ մի իշխանություն ենք, վորն ուզում  
է, վոր այլևս գյուղական աղքատ չլինի, վոր  
նա բարձրանա, աշխատի հասնել առաջ անցածնե-  
րին, դառնա մի տնտես, վորը կարողանում է  
բրտինք թափել և՛ իր համար և՛ անհամար:

պրոլետարական պետութեան համար: Յե՛վ յերբ  
վոր վողջ աշխարհի բանվորները տեսնում են,  
վոր մեր գործ առաջ է գնում, վոր գրագի-  
տությունն աճում է, կուլտուրական մակարդակը  
բարձրանում, բարձրանում է աշխատանքի ար-  
տադրականությունը և մի քիչ վոտքի յե կանգ-  
նում տնտեսությունը—այդ լավագույն ագի-  
տացիա յե հանուն համաշխարային հեղափոխու-  
թեան:


Բանվոր դասակարգի դատի համար պայքա-  
րող առաջադեմ մարտիկներից շատերը չգիտե-  
յին, վոր մեր գործն այնքան ծանր կլինի, չգի-  
տեյին, վոր մենք այսքան խոչընդոտների կը  
հանդիպենք և վոր այսպիսի աջողութեամբ  
կհաղթահարենք դրանց:

## ԼԵՆԻՆԻ ԱՆՈՒՆԸ ՀԱՂԹԱՆԱԿՈՒՄ Ե ՎՈՂՋ ԱՇԽԱՐՀՈՒՄ

Մեր շարքերում կար մի մեծ մարդ, վորը  
բանվոր դասակարգի ամենադժվար որերին,  
նույնիսկ այն ժամանակ, յերբ վոր ռուս բան-  
վորի գլուխը գետին եր խոնարհվել և անգլիա-  
կան և ռուս կապիտալիստների կրունկները  
տրորում էյին այդ գլուխը—նույնիսկ այդ ժա-  
մանակ նա հաստատապես գիտեր, վոր բանվոր  
դասակարգը պիտի հաղթի: Իմ խոսքը, իհար-

Մեր ապրածի իտոզը տալով անհրաժեշտ  
եմ համարում ասել, ընկ. Լենինը թեև այլևս  
մեզ հետ չի, բայց նրա գործը անկասկածելի  
կերպով հաղթանակում է:

Տեսնելով այն բուռն և կենդանի վերաբեր-  
մունքը դեպի գործը, վոր բանվորական մաս-  
սան և շատ ու շատ գյուղացիներ են ցույց  
տալիս, այն կենդանի հետաքրքրությունը, վորի  
արտահայտիչն այն Պուտիլովյան մրճահարն էր,  
վորն ասեց, թե՝ «մենք բոլորս ել հոկտեմբերյան-  
ներ ենք» (և մենք գիտենք, վոր այդ ճիշտ է  
այնպես, ինչպես և այն, վոր մենք ող ենք շըն-  
չում), յերբ վոր տեսնում ենք, թե ինչպես մեր  
աչքերի առաջ, նույնիսկ այն սոսկալի պայման-  
ներում, վորոնց մեջ մենք դեռևս այնքան մո-  
տիկ անցյալում գտնվում էյինք, հասակ  
ե առնում նոր բանվորների գեղեցիկ յերիտա-  
սարդ սերունդը, վորը պետության գործին վոր-  
պես իր սեփական գործի յե նայում, — մենք ա-  
սում ենք, վոր ընկ. Լենինը թեև մեր շարքե-  
րում չի, բայց նրա գործն ապրում է և այդ  
գործը հաղթանակելու յե ամբողջ աշխարհում (փո-  
թորկալից, տևական ծափահարություններ):



## ԿԱՐԵՎՈՐ ՎՐԻՊԱԿՆԵՐ

Եջ	Տող	Տպված է	Պեսք է լինի
6	11	վերևից տեղ	դեղ
7	4	հերք.	լույսի
7	3	» վոչ մի հույս,	վոչ ել մի հույս,
8	6	» խորհրդանիշի	խորհրդային դրամանիշի
8	3	» բայց միլիոններ լինելով	բայց միլիոնատերեր լինելով
13	11-10	» կյանքը անեղ ընթացքով առաջանում է և ընթանում է	անշեղ ընթացքով կյանքը առաջ է գնում և ձգտում է
17	11	» կյանքը վոչ թե միլիոնավոր բանվորների,	հարցը վոչ թե միլիոնավոր բանվորների,
19	9	» յերբ	յեթե
22	15	վերևից նկատի ունեյինք	նկատի ունեցեք
23	2	հերք. բայց դրանք	
27	6	» Սալգաֆրոնությունը	սալգաֆրոնությունը
32	7	» պետք է շինենք	շինենք
34	10	» «Հախախալուզիա»	«Հախախալուզիա»


38	2-1 ներք.	հատաւաճարի	հատաւաճարի
39	4 »	հատաւաճարի	հատաւաճարի
41	11 վերևից	հավանում	հասկանում
46	6 ներք.	նայելու ոգնության	հայելու ոգնության դիմելու
47	1 »	վոր արանից մի քանի տարի հեղափոխությունից առաջ	վոր մի քանի տարի հեղափոխությունից առաջ
48	15 վերևից	Գուլը	Գոցը
49	7 »	մկովու են	կովում են
49	13-14 »	նրանք այդպես էլ լավ են	նրանք առանց դրայել կապրեն



32 (4)

Գ-Ե

ԳԻՆՆ Ե 20 ԿՈՊ.



[3 n.]

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0063444

~~1012~~

A  $\frac{T}{19140}$